

htn

1923

N 36

1999

NP 1/4.

8881

16/2




Հայոց բարեկամութեան

ԳԱՅԻՆԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

Է Լ Ի Մ Ե Կ Զ Ա Հ

Կ Ո Մ Ե Գ Ի Ա



Թ Ի Ֆ Լ Ի Զ



ԵԼԻ ՄԵԿ ԶՈՅ

ԿՕՄԵԴԻԱ

ՍՊԻՐԻՆԱՅԻՆ ՇՐՋԱՎԻՇ ԱՆ-ԱՂ ԲԻ ԱՆԳԱՄ ԱԵՐԻ ՊԵՐԱԳՐԱԾ և ԹԻՔՆԵՐԵՐ ՀԱՂԱՏՄԱՆ
ԱՆԴՐՈՒՆՈՒՄ 1870 ԱՆ-Ի ԱՎՋԻՆԻ 4-ԻՆ:

Հայոց
Տիգրանական


ԵԼԻ ՄԵԿ ԶՈՀ

ԿՕՄԵԴԻԱ. ՀԻՆԳ Ա.ՐԱՐՈՒԽԱԾՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

1858

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ



ԹԻՖԼԻԶ

ՅՈՎՃԱՆՆԵԼՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵԱՆ ՓՈՎԱՅ. 5

1884

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍԱՐԳԻՍ, Հարուստ վահառական . . Պ. ԱՄԵՐԻԿԵԱՆ †
ԲԱՐԲԱՐԵ, Կըս կինը Օր. ԱՐԱՄԵԱՆՑ †
ՄԻՔԱՅԵԼ, Կըսաց որդին Պ. ԶՄՇԿԵԱՆ
ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ ՍՈՒՐԱԹՈՎ,
գնդապեա Պ. ՄԻՐԱԴԵԱՆՑ †
ՍԱԼՈՄԵ, Կըս կինը Տ. ՄԵԼԻՔ-ՆԱԶԱՐԵԱՆՑ
ԱՆԱՆԻ, Կըսաց աղջիկը Տ. ՍՈԹԻՆԻԿ
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻՉ ԲՐԻԿԵՆ-
ՏՕՎ, Ջլիխոնատէր Պ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
ՎԱՆՈ, Բըլիանտօվի որդին. Պ. ՏԵՐ-ԱՍՍՏՈՒՐԵԱՆՑ †
ՆԱՏՈ, Բըլիանտօվի աղջիկը Տ. ՄԵԼԻՔ-ՆԱԶԱՐԵԱՆՑ
ՕՍԵՖ, Վահոի ծառան Պ. ՄԻՐԱԴԵԱՆՑ †

Առաջին և չորրորդ արարուածները կատարվում են Սարգսի
տանը, Երկրորդն ու հինգերորդը՝ Սուրաթօվի տանը, իսկ Եր-
րորդը՝ Բըլիանտօվի տանը:

Անցքը պատահում է թիվլեզում 1860-ին:

41923-ԱՅ

ՀԲ. 1931

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Апреля 1884 г.
Типографія И. Мартirosianца, Орбеліан. ул., 5

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՍՏԿՆ ՈՒ ՀԱԳՈՒՍԸ

ՍԱՐԳԻՄ, 55 տարեկան, եւրոպական սև հագուստով:

ԲԱՐԲԱՐԻ, 50 տարեկան, տեղական հագուստով:

ՄԻՔԱՅԼ, 27 տարեկան, եւրոպական հագուստով:

ԵՍԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, 50 տարեկան, զինուորական հագուստով: Ուսերի վրայ գնդապետի մնջաւոր սպիտակ ուսնոցներ, խոլ կրծքին 4-րդ աստիճանի սուրբ Գիշուգայ սպիտակ խաչ (նշան քաջութեան): Հանդիսի նշանագցեստի վրայ ունի գնդապետի աստիճանին վայել և ուրիշ շքանշաններ ու շքադրամներ:

ՍԱԼՈՄԻ, 40 տարեկան, տեղական հագուստով:

ԱՆԱՆԻ, 19 տարեկան:

ՍՏԵՓԱՆ ԳԱՆԵԼԻՉ, 60 տարեկան:

ՎԱՆՈ, 25 տարեկան:

ՆԱՏՈ, 18 տարեկան:

ՕՍԵՓ, 20 տարեկան:

Եւրոպական
հագուստով:

ԾԱՌԱՅՑ, Սարգսի տանը, հասարակ սև չեռքէզկայով:

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Սարգսի տանը մի զարդարուած սենեակ ջորս դռներով՝ աչ,
ճախս եւ երկուսը խորքում։ Այս վերջին դռներից աջ^{*}) կողմինը
զլխաւոր մուտքն է, իսկ ճախսը դէպի պարտէզն է տանում։ Սե-
նեակի աջ կողմը սփռոցով ծածկած սեղան, որի վրայ դարպած
են մի բանի գրքեր, իսկ ճախս կողմը դիվան եւ սեղան։ Ուր
հարկն է աթուներ եւ բազկաթուներ։

ՏԵՍԻԼ ԱԹԱԶԻԿ

ԱԱՐԳԻՍ, ԲԱՐԲԱՐԻ

ԱԱՐԳԻՍ, ՏՊԻԵԼԱՆ աջ դռներից, ԳԼԽԱՐԴԸ չեւ-չեն, ԲԱՐԴԱՅԱՆՃ:
իսէնց էլ իր ասածի. «Հա ու չէ» չէ իմանում
էլլ։

ԳԼԽԱՐԴԸ չգում է սեղանն վրայ։
ԲԱՐԲԱՐԻ, հւանելով։
ԲՂԺԽԻՂՄ իսօ չիս կանա անի խղճին. տեսնում իս
չէ ուզում, զօռով բան կուլլ։

ՆԱՊԻՐ-Յ է։

^{*}) Աջ, յակ, պէտք է լնդունել հանդիսականների գերքից
նայելով։

ՍԱՐԳԻՍ

Զէնդ, ձէնդ, դիմք քու միզն է, Բարբարէ, վուր
էնէնց զալիմն է) է կանդնած:

ԲԱՐԲԱՐԵ

Վունց չէ, մէ իմ խիլքով է ապրում, մէկ էլ քու
խիլքով:

ՍԱՐԳԻՍ

‘Ես **) էլ էտ իմ առում է, վուր ինչ ուզից հիդը
գնացիր, ինչ ասաւ հիդը բանի տուիր ու վերչը բերիր
էն տիզը, վուր վունց հօրն է լսում, վունց մօրը:

ԲԱՐԲԱՐԵ

Թէ կի նա իր հօր վրայ էլ ու մօր վրայ էլ խելօք
է, ՚նս ինչ անիմ էտումը, քա:

ՍԱՐԳԻՍ

Այ, ալ, էտենց իս խօսում դիմք վուր իրան էլ իս
գժուեցնում է:

ԲԱՐԲԱՐԵ

Թուն թէ գժուեցնում իս, թէ չէ ՚նս խկի էլ չմ
գժուեցնում:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ, ի՞նչ... ՚նս իմ գժուեցնում. արի ու հիդը խօսի:

*.) Դ. առաջ մակակէտով նշանակած (՞Ն) պէտք է արտասա-
նել որպէս Թուրքաց Յ կամ Վրացոց ց:

**) Ե առաջ մակակէտով նշանակած (՞Ե) պէտք է արտասա-
նել և խկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի վանկը բա-
ռե միջում կամ վերջում ձայնաւորեց յետոյ. օրինակ՝ մա յիս,
Գա չէ անէ, երկնա յին, եսա յի, և այլն Տես և ծանօթութիւն
ՊէՊՈ հօմեղիայում:

ԲԱՐԲԱՐԵ

Յաս ինչ իս անում. ամալ աշքարա ասում է վուր
չէ ուզում, դուն կի ուզում իս զօռով ուզիլ տա.
ախար վուր խելօքը կու րէ. հա զժուեցնիլ է ու զը-
ժուեցնիլ:

ՍԱՐԳԻՍ, ՅԵ-ՏԵՐԵ ԲԱՐՁՐՈՒՄՆԵՐԴ:

Տօ, Ստեփան Գանելիչը, Ստեփան Գանելիչը, էն
միլիօններու տէրը, ախչիկ ըլի տալի աղանչաքով, պա-
տինտաքով, էնդադա վուղ ու բաժնքով ու խելօքը
չուղէ: Տօ, հազիր ասլա թէ՛ վուր խելօքը չի ուզիլ:

Ման է գուշ բարէացած:

ԲԱՐԲԱՐԵ

Ի՞նչ անիմ. իս տեսնում իս վուր նրա ուշկ ու
միտկը Անանին է:

ՍԱՐԳԻՍ

‘Ես նրան Անանի կու շանց տամ, հալա մէ մու-
լափ տայ: Խոէնց էլ օլին, մարթ ձիեմէն վէր զալ
իշին նոտի, մարթ խալ ու խալիչէն թողնէ զեղնի
վրայ զլորուի... Տէր օդորմած Աստուձ... Ըմ, Եա-
զօր Ախմօնիչ, էս էր քու մտկումն էլի... Էնքան
էկաւ ու գնաց, էնքան տարաւ ու էրի, ինչըս աղու-
նակի պէս էրեխիս խիլքէմէն արաւ խտակի հաս թէ
՚նս քու տակը մնացի, Եազօր Ախմօնիչ, էլ ՚նս մարթ
չիմ ըլի, էլ էս գդակը դիխիս զդակ չի ըլի... Էս
ինչ բանիր մօզա էկաւ, ախակիր, թէ եազի տանը
եազի տղին տուն ու զուս անէ, ճաշ գնայ,
իրիզուն զնայ, ախչկայ հիդ սազ ու բազ անէ, կօ-
սիս նրա բիձու տղին ըլի, ինչ է - հարևնիր ինք,
կօսէ. հարևնիր չդառան ցաւ դառան, ՚նրգնուց

պատիժ էկան գլխիս էլի: (Զոյնը կոփելով) Պուն էլ
ամէն սահաթի էս ճաշ սարքէ նրանց համա, էս
մուրարէք մօդ տոմի, էս միրք առնուլ տու... ի՞ս
էիր ուզում էլի: Աստուծ քիզ կու հարցնէ, քիզ, Բար-
բարէ. Միխէլի դժուեցնողը բաշտան չէր դուն իս:
ԲԱՐԲԱՐԻ

Ի՞նչ հանգն իս խօսում, ա մարթ, դուն վուր հեր
իս, նև մէր չիմ, դուն վուր ուզում իս Միխէլի
լաւոթինը, նև չիմ ուզում: Տեսնում իս իր ասածն
է: Ախար վրէն չարանում իս, էն խիլքի տէրն է
վուր վախենալ:

ՍԱՐԳԻՍ

Բարէմց ասա ձեռներուն էլ պաչ անիմ էլի:
ԲԱՐԲԱՐԻ

Ո՞վ է ասում վուր ձեռին պաչ անիս, ամա ամադ
իս արի, աշխատանք իս քաշի, ուսում իս տուի, ըե-
րիլ իս մարթ իս շինի. քա, թող ինչ քէփը տալ էն
անէ է, քիզ ի՞նչ:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ քէփը տալ էն անէ, վունց չէ, նև էլ դիփ
էտ թաղարիկումն իմ: Աստուծ գիղենալ, տանեմէն
դուս կ'օնիմ թէ էս բանումն ինձ չի լի:

ԲԱՐԲԱՐԻ

Ճատ կի կու վախեցնիս նրան. էլի Աստծուն փառք
տու վուր էտէնց խունար վուրթի է տուփ քիզ, թէ
չէ քու դուս անելուն չէր մնալ ինչը էսօր:

ՍԱՐԳԻՍ, բարչացած:

Էս կնիկն ինձ կու դժուեցնէ զրուստ էսօր, Աստուծ
գիղենալ:

ԾԱՌԱՅԻ, մանելով խորտի ոջ ուսնից:
Եղա, Ատելիան Դանէլիչն է:
ՍԱՐԳԻՍ, շուարուած:
Ատելիան Դանէլիչը... վուրդի է, վուրդի. դիվիր
էկան:

ԾԱՌԱՅԻ

Զէ, աղա, ներքիւը կալասկումը մնում է:
ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ անիմ հիմի, ի՞նչ մօգօնիմ... (Ծառային:) Գնան,
գնա, համեցէք ասա: (Ծառան ուռուն է գնում:) Աբա
ի՞նչ ջուզաբ տամ, ի՞նչ, քիզ իմ հարցնում, ասա էլի:
ԲԱՐԲԱՐԻ, բարչացած:

Ի՞նչ ջուզաբ գուզիս տու. էն դուն, էն քու Ատե-
լիան Դանէլիչը:

ՍԱՐԳԻՍ, աւէլի բարչացած:

Է՞մ, ը՞մ, մէ մտիկ է...

ԲԱՐԲԱՐԻ

Քու զլուխ չունիմ, քա...

Գնում է, բայց ուսնելով Սունկոն Դանէլիչն
ուռում, շուարում է:

ՏԵՍԻԼ Բ

ՆԲԱՆՔ, ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼՉ

ՍԱՐԳԻՍ, աւանչին:
Քու ուստ զալու սահաթն էլ, հըա...
ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼՉ
Բարի լուս ձիզ:

ԲԱՐԲԱՐԵ

Աստծու բարին, համեցէք:

ՍԱՐԳԻՍ, ժաշցըռ-լէտիզ:

Ախար, Ստեփան Գանձէլիչ, ուր իս էլի ջափա քաշի. ինձ վոր հրամալիլ էլր, չէլի զա:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԶ

Ինչ անխա, պարուն, տիր ուժ մօդ բան կ'ունենալ նա պիտի գնալ... (Նստէշէ) Էլ ձիր թափաղին չմ մնում:

ՍԱՐԳԻՍ

Վա, համեցէք, դէթաղփա:

ԲԱՐԲԱՐԵ

Էտ ինչ խօսի է, պարուն, էլ ինչ միր թափաղէն է հարկաւոր, ձիր տունն է:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԶ

Ճնորակալ իմ, իմ քուր... Խիստ դաժբեցակ, էս ձիր սանդուխան էլ խօսմա մէ ձէրը զեղնքին է, մէ-կէլլ շեղնքին:

ՍԱՐԳԻՍ

Ախար, օխնած հոքի, նև էլ էտ իմ ասում վոր դուն ուր էլր նիզանում, է. զիդիս քու խաթիր ինչ-ըու ներդնքի վուռքը կ'էհամ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԶ

Գլուխմ, զիդիմ, պարուն... Վա, նստեցէք է... (Նստում էն՝ Բարբարէն Սպէֆան Դանէլիչի ոջ հոշի) Աւրիշ ինչ բարին հարցնիմ, իմ քուր:

ԲԱՐԲԱՐԵ

Փառք Աստծու, հրամանք վունց իք:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԶ

Է՛ն, ապրում ինք էլի... (Սարգանէ) Անց էլի կենում էսթէնը, ասի քիզ էլ ուրախացնիմ. Էն փոդրաղն ինձ վրայ մնաց, վանցոր ասում էլի քիզ, էնդու վրայ շատ պակաս:

ՍԱՐԳԻՍ, զարհանալով:

Թէ քու Աստծու կու սիրիս... Գնա ու զնա, Ստեփան Գանձէլիչ, ալ Աստծու վոր կու տայ, երկու ձեռով կու տայ է. Էտ խօ ինչի դադում կ'օնէ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԶ

Դադումն էն է, աղա Սարգիս, վոր էլ մի ուշացնի էն բանը:

ԲԱՐԲԱՐԵ, ՀԱՅՆԱԼՈՎ ՎԵՐՀԵՆԱԼՈՎ:

Դաշլա չանիմ ձիզ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԵԼԻԶ

Զէ, չէ, իմ քուր, նատի, դուն էլ իմացի, նես թաքուն բան բոնիլ չիմ սիրի. դուն էլ մէր իս, կուլի զիգենաս էլ, քու Միխէլին ուզում իմ փեսայ շինի իմը... (Յայ առաջն Սարգան Հրայ) Կ'օսէր էլի:

ԲԱՐԲԱՐԵ

Տարի քիզ ուժըր, պարուն, վոր մինձ բախտաւուրութին է միզ համա. ամա Միխէլին ասում է վոր ձէր կնիկ ուզելու միտկ չունիմ, կ'օսէ:

ՍԱՐԳԻՍ, ԲԱՐԲԱՐԵ:

Է՛ն, զուն ինչ զիդիս: (Սարգան Դանէլիչի) Գուզէ էլ, Ստեփան Գանձէլիչ, ու ձեռիզ էլ պաչ կ'օնէ, քու արիւր:

ԲԱՐԲԱՐԵ, առաջին, նեշնալով:

Տէր օղորմած Աստծու:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻՉ, ԲԱՐՅԱՐԵԼԻՆ:

Ումիկ ունիմ վագ բան չիմ ասում, իմ քուր: (Սոր-
գլուհն) Պիտի շտապեցնիս, աղա ջան, զիփ էրկու շա-
փաթ չի քաշի ինչըու էն փօղրաթը կու հաստա-
տին. ասում իմ վուխտի ըլի, վուր քու տղին կառա-
վարիլ տամ էս բանը, էլ ուպրավիախւշերու ճանգը
չզցիմ մէկ էլ: Պիփունանցը փորցեցի, զիփունքը
խափեցին անիծածնիրը, զիփ իրանց կուռը տաշեցին:

ՍԱՐԳԻՍ

Նրանց աղաթն է, ինչ անիս, Ստեփան Գանէլիչ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻՉ

Է՛հ, պլոկեցին, ասում իմ, աղա ջան, պլոկեցին:

ՍԱՐԳԻՍ

Արա էտ հանգի բան վունց կ'օնէ իմ Միխելը.
արխային կաց, Ստեփան Գանէլիչ, իմ հոքին էլ զի-
դենայ ու նրա արխին էլ իմ ասում, վուր դէնիշկէն
ինչ է, մէ դէնիշկումը չի խափի քիզ:

ԲԱՐԲԱՐԵ

Էլոնէկ էլաւ իմ Միխելին:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻՉ

Խտէնց վուր չըլիմ ճանչնում, խօմ էսէնց էլ տաք
տաք չիմ ըլի կպչում. ումը տամ իմ ախչկան վուր
ձեռիս չպաչ անին. ամա մէ խօսկով ձկր տղին նս
էն զլիէն հաւնեցայ: Խօ զիզիս, ինչ մտկումս մէկ
դրի, պիտի կատարիմ ու վիրը թէ նա էլ կու խա-
փէ ինձ, թող խափէ:

ԲԱՐԲԱՐԵ

Էն օրը մահ ըլի ինձ:

ՍԱՐԳԻՍ, Թէ չիծաղը:

Հը', հը', հը'... ինչ լս ասում, Ստեփան Գանէլիչ:
ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻՉ

Խօսկի վրայ իմ ասում թէ չէ խափելու ինչ ունէ,
իրն է ու իրը: Էն մէ ախչիկն ունիմ էլի, իմ քուր,
մէկ էլ մէ տղայ. հալալ կէս կ'օնիմ կալինքս, կէսը
մէկին, կէսը մէկէլին:

ԲԱՐԲԱՐԵ

Վստուձ երկուսին էլ քիդ տայ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻՉ, շարունակէլով:

Թող խափէ, տեսնիմ ինչումն է խափում: (Ծիծա-
ռէլով) Հը', հը', հը'... իմ կամքով վուր կէս կալինքս
տալիս իմ, էլ էստու վրայ աւելի ինչ գ'ուզէ:

ՍԱՐԳԻՍ

Վու արկւը, Ստեփան Գանէլիչ, դրուստ Վստուձ
օղորմութին է էտ բանը ինձ համա էլ, նրա համա
էլ. ամա էն օրն էլ ասի վուր մէ քիչ պիտի ժա-
մանակ տաս, ինչըու մէ տիղ մէկ-մէկու ուաստ գան,
թէ չէ խօմ զիզիս, վուզն ու մէրու պահտէն նրա
համա դիփ մէկ է:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻՉ

Վահ, էէր օխնած, էտ խիստ է էրգարանում բանը:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչի, Ստեփան Գանէլիչ, էրէգ մէկ, էսօր էրկու,
չէր էտէնց ինչ վախտ է անցկացի. Էս մէ էրկու
շարթումը կու վրայ բերիմ էլի, բաս էլ ինչ էր
իմ, վուր էտ էլ չկանենամ: Ամա թէ ինձ կու
հարցնիս, նս ասում իմ վուր մէ տիղ ուաստ գան,

գոտանան. ինչ անխա, ասում ինչ հիմի մօդէն է-
տէնց է, կ'օսէ:

ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

Խիլքումս նստում է առածզ, աղա ջան, բառ չեր
էստ. վրայ պիտի փիքը անխը:

ՍԱՐԳԻՍ

Բառ, բառ, Ստեփան Գանէլիչ, ո՞ս կու խմաց անխմ:
ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

ԷՇ, նիրողոթին, զլիսացաւութին տուի: (Վէր է
չենայ, մեռնէրը հետեւում էն:) Մինաք բարտի, էս օրե-
րուն կու մնամ քիզ, աղա ջան, էլ մի երդարացնի, քու
հօրն օղորմի:

ՍԱՐԳԻՍ

Վրայ աչկիս, վրայ աչկիս, Ստեփան Գանէլիչ:
ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

Էստուձ վիրչեներուս բարի անէ:

ՍԱՐԳԻՍ

Էմին, ամին, Տէր Էստուձ:
ԲԱՐԲԱՐԵ

Էստուձ վուրթիքդ զօրացնէ:
ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

Էրգար օր ունենաս, իմ քուր, Էստուձ քու Մի-
խէիլին պահէ, լաւ զաւակ է, լաւ. էրնէկ չի ըլի իմ
Վահոն էլ նրա խիլքն ու վարքն ունենայ... թէ-
գուզ էնզու կէսը:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչն է պակաս, Ստեփան Գանէլիչ. անմիդ իս
գանգտում:

ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

ԷՇ, աղա ջան, խխտ չէհելութինիր է անում
է... Մէ էս բանը պըճիլ էր, ասում էի, ու իժում
սիխտի նրա վատումն էլ բուխտ զցիմ, թէ չէ ա-
նումս խտակ բէղնամ կ'օնէ, քու արխւը:

ՍԱՐԳԻՍ

Աստուձ մէ լաւ հալալ կախնակիրի արժանի անէ:
ԲԱՐԲԱՐԵ

Աստուձ էնէնց բախտաւուրէ, վունցոր ձիր սիրալ
գ'ուզէ:

ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

Բներանդ շաքար, իմ քուր: (Վառ-մ է և հանողուն հէց
յեր բառ-առաջէ) Կուրթ, Մէրդէլ Տարասիչ, ինչ միտս
էկաւ, Սուրաթինք մնամ էստի ձիզ մօդիկ հարկենիր
ին. ում տանն ին կենում, իս չիս զիզի:

ՍԱՐԳԻՍ

Իրանց տներումը, հէնց էստի էւէտ, դրուստ էս
տան դէմուզէմը:

ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

ԷՇ, աղքաթդ խէր ըլի:

ՍԱՐԳԻՍ

Ի՞նչ կ'օնէիր, Ստեփան Գանէլիչ:
ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

Վունչիչ, աղա ջան, էն օրը Սօրբանիտումը բարեկ-
մացանք, այ էն վուր խոճերու համա բալ էին սարքի:
ՍԱՐԳԻՍ

Հա՛, հա՛, Ստեփան Գանէլիչ, իմացիլ իմ: Զիմ զի-
զի... (Բարբարէկէն:) վուր օրն էր... (Սուեկան Գանէլէն:)
Եազօր Սիմօնիչի կնիկը միր տանն էր, միդ էր ասում:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ

Ճատ լաւ խալս ին էրկում այ:
 ԲԱՐԲԱՐԵ

Թիախ, մարթը զբաստ Աստծու դառն է:
 ՍՈՐԳԻՍ, առանձին, յածը:

Նրանց անումն էլ կտրուի:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ, շաբաթակելով:
 Ալոքիը խօ մէ հայերէն է խօսում, վուր քէփր
 դու քայ մարթունը, քու արիւը:

ՍՈՐԳԻՍ

Գիղիմ, գիղիմ, Ստեփան Գանէլիչ:
 ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ

Խխատ դուր էկաւ է. խնդրեցի վուր միզ մօդ գնալ
 դալ ունենան: Ո՞վ գիղէ վունց ռաստ գայ, ասում իմ
 վազօրոկ էւէտ տունը զիղենամ, վիզիսի վոխտը
 էլ դէս ու դէն չննդնիմ:

ԲԱՐԲԱՐԵ

Հէնց միր տան գէմուգէմն է:
 ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ

Ճնորակալ իմ, իմ քուր՝ մնաս բարով, աղա ջան:
 Սարգսին չեւու է առաջ իս:

ՏԵՍԻԼ Պ

ՆՐԱՆՔ, ՍԱԼՕՄԻ

ԲԱՐԲԱՐԵ, աւանձելով Սալօմէն: որ ճանաւը է գլխաւոր դաշնից:
 Քայ, այ ինքը Սալօմէն: (Սալօմէն:) Համեցէք:
 Սալօմէն հնում է շուտրուած:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ

Վա, էս լաւ ռաստ էկանք, հէնց ձիզ վրայ էլնք
 խօսում, համեցէք:

ՍՈՐԳԻՍ, առանձին:

Վուր չըլիմ ամանչում, սաղ սաղ կ'ուտիմ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ, Սալօմէն:

Վունց իք, իմ քուր, Եազօր Սիմօնիչս վունց է:

ՍՈԼՕՄԻ, ծանր ողջունելով ու ժրդունելով:

Աստուծ ձիր մէ օրը հազար անէ, լաւ ինք. հրա-
 մանքդ վունց իք, էրեխէրքը խօ լաւ կան, գէնացվալէ:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ

Փառք Աստծու, դիփունքս սաղ սալամաթ ինք...
 Միր կուռը մէկ չանցկացաք:

ՍՈԼՕՄԻ

Միզ համա մինձ պատիւ է, պարուն, էլի վուր
 դուք քանք: (Ազ ու յախ նայելով) Վուտի վրայ ինչ
 իք. (Սարգսին Դանիլէն:) Համեցէք, զէթաղվա:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ

Էս է գնում էլ վուր հրամանքդ տուն էկար...
 Ճարկաւոր խօսկ ունէի սրա մօդ, ասելուս ասի, հիմի
 դուք խօսեցէք, նս էլի մէ քանի տիզ բան ունիմ:
 Է՛ն, մնաք բարով: (Գնայիշ:) Մախլաս, չարչրվում
 ինք էլի: (Սարգսին:) Էլ մի ծուծեցնի այ:

ՍՈՐԳԻՍ

Ջուխտ աչկիս, Ստեփան Գանէլիչ, ջիբումդ զի-
 դայիր:

ՍՏԵՓԱՆ ԴԱՆՅԵԼԻԶ, Սալօմէն:

Իմ կուղմանէ Եազօր Սիմօնիչն կ'օսիս վուր միզ
 չմոռանալ ու ախչելադ շատ ու շատ բարով... (Սալօմէն

ուշաւում է:) Ապրիս ասա... Խիստ լաւ ախչիկ ունիս,
իմ քուր, բախտաւուր կնիկ իս նես ու իմ հոքին...
Ղրգէ միը տուն, քու հօրն օղօրմի, ախչիկս կու ուրա-
խանայ: (Դաւում է, ամենով հետեւում էն:) Մի նիդանաք,
խնդրում իմ: (Սարգսին, գլխաւոր ուրուն հօր:) Քու հօրն
օղօրմի ձեռը վիկալ:

ՍՈՒՐԳԻՍ

Վա՛, վա՛, Ստեփան Գանէլիչ:

ՍՏԵՓԱՆ ԳԱՆԷԼԻՉ

Է՛կ, թարգը տու, աղա ջան է:

ՍՈՒՐԳԻՍ

Ի՞նչի, ի՞նչի, իմ սկարտկն է, Ստեփան Գանէլիչ:
Գուշու էն գնում:

ՏԵՍԻԼ Դ

ԲԱՐԲԱՐԻ, ՍԱԼՈՄԻ

ՍՈԼՈՄԻ

Ի՞նչ սառած մնացի, քա՛... (Նարում էն:) Կիդուս
կապուեցաւ գրուստ... Եարաբ նրա պէս պատուական
մարթ էլի կուլի:

ԲԱՐԲԱՐԻ

Ի՞ն գոլլաթն ումը տաս, Սալօմէ, վուր դիվունի
համա պատուական ըլլի:

ՍՈԼՈՄԻ

Էլ մի ասի, Բարբարէ ջան, զլիսեմէն ինչըս վու-
րը զըմզըմում է... ասում ին ներեք չոլս միլիօն ա-
ւել կունենայ:

ԲԱՐԲԱՐԻ:

Եկի ինչոր նուր փօղբաթ է վիկալի... մէկը տասը
կու դադէ, կ'օսէ, ասում էր հիմի:

ՍԱԼՈՄԻ, յոգուց հանելով:

Ըմ... ինչի չի դադի... ջուրն էկիլ է միզպէսնե-
րուն է տարի... Քանի չէր ասի իմ մարթուն, վուր
մէ փօղբաթ վիկալնէ. ամա էնդուրն էլ շնուք պի-
տի, ինչ անիս:

ԲԱՐԲԱՐԻ:

Վենակ շնուքի բան չէ, Սալօմէ ջան, Աստուճ
ումը կու տայ, կու տայ. ամա ինձ թէ կու հար-
ցնիս, օչովի գոլլաթն աշկումս չէ զալի... կու մեռ-
նինք դիսի էստի կու մնայ... չուրս զազ պատանքն
ու միր ջանը. թող մօդ անին քանի կանան:

ՍԱԼՈՄԻ

Ախավաղլախ նրանց գլխին: (Մարեցնելով ալես:) Վի
մօդ բանի իմ էկի, Բարբարէ ջան... Ախար էմ քուր
Միլիսէլով վուր էսէնց սրտով կալի է միզ, ինչ պար
անինք:

ԲԱՐԲԱՐԻ:

Վուլի դուր չէ զալի ձիզ:

ՍԱԼՈՄԻ

Վուլ իմ աչկին, էտ ինչ իս ասում, Բարբարէ
ջան. էն օրը մահ ըլի ինձ, վանց թէ դուր չէ զա-
լի... էնէնց սիրում ինք նրան գլխունքս ու պատ-
փում, վունցոր միր տանու վուրթուն... Նա ուրիշ
ազիզ մազիզն է. շատ ծնող պարձենայ վուր նրա
պէս վորթի չունենայ... Անանիս խօմ նրա մօդ



Էնէնց է, վունցոր քուր ու ախպէր. ամա մէ բանով պիտի քութահ ըլի թէ չէ:

ԲԱՐԲԱՐԵ

Իմ ձեռին՝ ինչ կայ, Սալօմէ ջան... Գլուէ Արարիչը վուր քու Անանուն էնէնց գուզիմ իմ հարսընի, վունցոր հոքուս համա արքաութին. ամա ինչ անիմ վուր Միխէլի Աէրը կրակ է վեր ածում... չէնց էսօր էլ խօսկ վէր ննդաւ, քու արիւր: «Տանէն գուս կ'օնիմ թէ էտ բանը կուլի», կ'օսէ: Աբա ինչ անիմ, Սալօմէ ջան:

ՍԱԼՕՄԵ

Վուէ քուանամ ՚ես, էտ հանգի բան վ՞րւնց կ'օնիմ, աշխրքի զէնօ ու մասխարայ իո չիմ գառնայ: ՚Ես վուր ասում իմ, ասում իմ համովութենով ըլի բանը, թէ չէ ինչ լազաթ ունէ: Լաւ տղայ է քու Միխէլիլ, հատը չունէ, քու արիւր. ամա ՚եթէ իր հօրն ընդէմ կուլի, ինչ կ'օնիմ, ինչ արած կուլինք էն չախը... Անանուս վուր տալիս իմ, Բարբարէ ջան, ՚ես մենակ Միխէլիլն չիմ տալի, ձիզ իմ տալի, ձիզ կարողութենին իմ տալի, թէ չէ դարդակ չինովնիկը ինչ գլուխս իմ տալի... չիմի ինչ անինք, վուր ուրիշներու պէս բահը ու բաժինք չունինք հազիր. համ փուղ, համ էլ էն հանգի ախցիկ ո՞վ կու տայ ձիզ ախար, եա գլուխս էն տիղն ո՞ւր զցիմ վուր իմ վուտով զամ ու ձիզ աղանձաք անիմ:

ԲԱՐԲԱՐԵ

Պայ, աչկիրս քուանալ, Սալօմէ, թէ օմքնու բաժինքը եա իմ այնումն ըլի զալի, եա Միխէլիլնոր... Նա պրծնի ամեն ցաւեմէն, վուր դրուստ իմ ասում:

Ասած է. «Սուխ ու հաց, սիրտը բաց». ամա էլախտ էլ ասի վուր հէրը ղաբուկ չէ անում: ՍԱԼՕՄԵ

Բաս իմ չարէն ինչ է, Բարբարէ ջան, մէ բանով կտրական արէք թէ Աստուծ կու սիրիք, ան հա, ան չէ... ՚Ես էլ ախչկայ տէր իմ, հէնց բռնէ ճօշալու իմ գառի, քու արիւր... Թէ կուլի խօ խստ լաւ, թէ չէ ու Միխէլիլն զէմուդէմը կ'օսիմ, Աստուծ գիղենայ, վուր մէ քիչ վուտը լիդ խփէ... Խալիսի խօսելու ո՞ւր իմ գառնում անմիղ տիղ:

ԲԱՐԲԱՐԵ

Ինչ անիմ, Սալօմէ ջան, ՚ես էլ մոլորվիլ իմ, Աստուծ գիղենայ:

ՍԱԼՕՄԵ

Քիզ կտրականն ասիմ, Բարբարէ, մէ քանի օր էլի կու մնամ, ինձ ջուզաբն իմաց արա... Հալբաթ ՚ես էլ միր զլիսի չարէն կու տեսնիմ: (Ոտքէ չայն է շալում, շուտրվում է:) Մնամ վուր քու մարթն է: (Վէր է կէնում:) Գնամ, զալմաղալ չբաց անէ: (Բարբարէն և ւեր է կէնում:) Մի նիզանա, գէթաղվա, ՚ես էսկանց բախչեմէն դուս կ'էհամ, (Գնայլէ:) ճանփին չուաստ դամ:

ԲԱՐԲԱՐԵ, առանչին:

Չոր սատանէն ուաստ դայ քիզ:

Հէտիւում է Սալօմէն:

ՍԱԼՕՄԵ

Աբա ո՞ւր իս ջափա քաշում, գէնացվալէ: ԲԱՐԲԱՐԵ

Ինչ կայ:

ՍԱԼՈՄԵ

Իմ ուժիկը դուն իս, Բարբարէ ջան:
Դուրս է գնում ունդ պարտեղը:

ՏԵՍԻԼ Ե

ԲԱՐԲԱՐԵ, յեռոյ ՍԵՐԳԻՍ

ԲԱՐԲԱՐԵ, մեռի, առաջ գոշը:
Վու աչկն էլ. խիզճ էրեխլս ջաղօից դրուստ:
ՍՈՐԳԻՍ, վերաբառաշունը:
Իր բախտը վուր զնաց, թէ չէ մէ բէարուռ կ'օ-
նէի էս ջզրած սրտիս վրայ, վուր էլ յաւիտեան վունց
դէսն էլն էկի, վունց Միխէլին տեսի:
ԲԱՐԲԱՐԵ

Հիմի էտ էր պակաս:

ՍՈՐԳԻՍ

Հը՞, էրկու-էրկու դէղա նստեցաք, խօսեցաք, ձե-
մեցիք, կտրեցիք, ՚նս վունչիչ էլի... Մուլափ տան
հալա. հէտի օր կանդնեցնմ ՚նս նրանցը, վուր ա-
սին հա... յօ տեսար, տեսար էն պատուական մար-
թուն, յօ քու անդնով իմացար հիմի էն խօսկիքը.
Էն էլ ՚նս էի:

ԲԱՐԲԱՐԵ

Յսուլ յօ չէի. ամա Աստուձ կու վիլալնէ, վուր
էտէնց սուտ-սուտ ուժիկնիք տուիր էն մարթնւն. յօ
գիղիս վուր Միխէլիը չի ուզի:

ՍՈՐԳԻՍ

Ա՛ կու տեսնիս թէ չէ:

ԲԱՐԲԱՐԵ

Վոնց չէ, աւտաս աղանձաք անէ:
ՍՈՐԳԻՍ, սասպիչ բարիացած:
Բարբարէ, հիռացի աչկեմէս, թէ չէ քիզ էլ ու
նրան էլ էս սահաթիս... բերնումս ինչիր է գալի:
ԲՈՐԲԱՐԵ, բարիացած:

Մէ խիստ չարացի, խիստ, հէնց զիդենաս աշ-
խրքի տէրը դուն ըլիս... (Աստանցն) Լաւ տարի քիզ
դայ լաւ իքմին դուն իս գառի:

Բարիացած դուրս է գնում յան դունից:

ՏԵՍԻԼ Զ

ՍԵՐԳԻՍ, մեռի:

Ըմ, ձիր քօքը, քօքը... ինչ ստիղծելու էր կնիկ-
արմատը վուր ստիղծից Աստուձ... (Բարիացած հան է
գոշի հրծէն իփէշուն) Ալս, Միխէլի, քու խիլքն էլ
անիծուի, քու ուսումն էլ: Գրուստ կոօի ջինս է ա-
նիծածը. ախար Թորոսի թուռն է է. էսէնց էլ մըկ-
րատ: Համով ասի չէ, աղանձաք արի—չէ, ջգրուե-
ցայ—չէ, չարացայ վրէն—չէ... պատիկ էլա մալինց
ըլի, մէ ոօզգատրաք անիմ... Ի՞նչ անիմ, վունց
կոտրիմ... ախար քարափի տոլ դօվլրթին ածկի է
տալի ու շուռ է զցում... էսէնց էլ մարթ: (Լոռու-
թէն, յեռոյ իբրև լէ մ բան հրաբերելուն) Սու, սու...
(Սպասառաշի յեռվէ) Օ՛, Միխէլի, մուղալիթ կաց, փիս
բան էվուեցաւ գլխումս:

Գլխուր դունից մանում է Միքայէլը:

ՏԵՍԻԼ Է

ՍԱՐԳԻՍ, ՄԻՔԱՅԵԼ

ՍԱՐԳԻՍ, էրեար շտառ-թիւնից յետոյ, մինչդեռ Միքայէլը ու-
շանի հօդ զբաղուած է:

Ամա չէ, Բարբարէն զրուստ է ասում, էլի կուլի
համովութենով բան գտունալ: (Մատէնալով Միքայէլին
և ժաշկար-թէտէմին:) Ախար, օրս ուր իս սիւցնում,
վնարթի, ինչ դէթ իմ արի քիզ. աշխարքին դուն իս
խրատում, վնարթի, էտէնց վարպիլ կուլի փուր դուն
իս վարպում քու հօր հիդ:

ՄԻՔԱՅԵԼ

Ախ, հայր իմ, սպանիր ինձ ու վերջացրու:

ՍԱՐԳԻՍ

Աքա էտ խօսկ է փուր դուն իս ասում, վուրթի:

ՄԻՔԱՅԵԼ

Ուրիշ ոչինչ չէ մնում ինձ ասելու:

ՍԱՐԳԻՍ

Նստի՞ էսար, վնարթի, նստի՞: (Նստում էն. միմայն
յետոյ Միքայէլը երբեմն վեր է հէնում, էրբէմն իրին նստում,
նայած իր ներքին յուղմանցին:) Աքա մէ փիքը արա թէ ինչ
իս ասում: Ասում իս փուր իինքդ չիս խնահում ինձ էլի:

ՄԻՔԱՅԵԼ

Այս:

ՍԱՐԳԻՍ

Լաւ, ասածդ փուր արարմունքիդ նման չէ. մարթ-
փուր մարթուն կինք չխնահէ, նրա համա էլ ամէն
բանը պիտի վիզն առնի թէ չէ:

ՄԻՔԱՅԵԼ

Ոչ, հայր իմ, ոչ, ես պատրաստ եմ որևէ վտանգի ժամանակ քեզ ազատելու. համար կեանքս զոհել, բայց դու կամենում ես որ ես ամէն օր մա-
հին երանի տամ. այս ոչ մէկ որդի պարտական չէ
իր հօրը:

ՍԱՐԳԻՍ, գշուիը շարժելով

Աքա ինչ խօսիմ քի մօդ, վուրթի. էն լսու չէ ՚ես
մեռնիմ, կանց քիզ էրնէկ տալ տամ մահը: Իմ չա-
փշն ինչ է ախար, չիս իմանում. զարթնի քու բախ-
տաւորութիւնը որից ինչ կանամ ուզի ՚ես քիզ համա:

ՄԻՔԱՅԵԼ

Ի՞ն, հայր իմ, դու քու տեսակ ես հասկանում
բախտաւորութիւնը, ես իմ տեսակ. ինչքան որ խօ-
սնք այս մասին, մենք միմեանց չենք կարող հաս-
կանակ:

ՍԱՐԳԻՍ

Իմ ասածը զիփունքը կու հասկանան, դռն իս
փուր չիս հասկանում. ամա քու ասածը ՚ես չիմ
կարծում փուր քախկումը մէ մարթ ըլի, փուր կանենայ
քիզ հասկանա:

ՄԻՔԱՅԵԼ

Ես կարծում եմ որ ամէն զարգացած ազնիւ մար-
դու համար իմ ասածը շատ հասկանալի է:

ՍԱՐԳԻՍ

Քու արիւը զիփենակ, փուր վունց ազնիւը կանայ
հասկանա քիզ, վունց քախկոցին:

ՄԻՔԱՅԵԼ, ԺՊՊԱՀԿ:
Այդպէս ես նայում գործին, որ միմեանց չենք
հասկանում է:

ՍԱՐԳԻՍ

Լաւ է հէնց ասլրիս, եզզամինի վուխտ չէ. ՚ես
քիզ ասում իմ քու խելքը ճանցին, թէ չէ, Աստուծ
զիդենալ, ջրատար կու մնաս քախկումը: Աքա մէ աչ
ու ձախ մտիկ արա, մէկը կայ վուր քու հանդն ըլի
վարփնւմ, քու հանգը ժաժ դալի: Խօսկերով շատ բան
ին ասում, շատ բանիր ին քովանում, ինչ հաջախ,
խօսկը խօ փուղով առնելու չէ, վուր հէսաբով մըս-
խին. ամա դուն նրանց արարմունքին թամաշա ա-
րա: (Մէտահէլը անհամբէրութեան է շայ պալեա:) ՚Երեք
քու տոլ իմ, ՚ես շատ բան իմ տեսի քախկումը, ա-
ռանց խէր օչով օչովու բարի լուս չէ տալի:

ՄԻՔԱՅԵԼ, ՊԱՌԱՆՆԱ-ԸՆԿԱԾ:

Այո՛, այո՛:

ՍԱՐԳԻՍ, ՀԱՐԴԱԿԱԿԵՐՊ:

Օմքնու մէջը խէր կայ, դիմունքը միսրամանջի
պէս զիխին մօդ ին ըլում, լաւ մարթն էլ նա է էրե-
տում, խելօքն էլ նա է էրետում, զիգունն էլ նա է
էրետում, արթարն էլ նա է էրետում. ամա մարթ
ինչ դ'ուզէ արթար ըլի, ինչ դ'ուզէ խելօք ըլի, ինչ
դ'ուզէ զիգուն ըլի, թէ խէր չկայ նրա մէջը, հա-
լալ ախապէրն էլ էրեսը շուռ է տալի նրամէն, ուր
մնաց վուր մէկէլնիքը: Խօսկերով կի, տարի քիզ ումբը,
ինչքան դ'ուզիս կու գովին, ամա դիփ դարդակ՝ «Բօշ
չանախ, բօշ չվալ:» Տօ՛, առանց խէր թաքաւուրն էլ

**ԹԱՔԱՎՈՒՐԻ հիդ բարեկմութին չէ անում, ինչ իս
ասում գուն:**

ՄԻՔԱՅԵԼ, ՊԱՌԱՆՆԱ-ԸՆԿԱԾ:
Կատարեալ տանջանք է:

ՍԱՐԳԻՍ

Օչովիմէն քիզ խասո չի հասնի, վուրթի. վառք
Աստձու, տեսնում իմ խիլքով խելօք իս. ամա ՚ես
ուրիշ իմ... ՚ես վուր կամ, քու հէրն իմ, ուզում
իմ ինչ ՚ես փորցուիլ իմ իմ փորցածն էլ զիդենաս,
վուր փորցուելու վրայ էլ նուր մէկանց ժամանակ
չկորցնիս: Լաւ զիխացի, վուրթի, զիփ սուտ է էս
աշխարքումը սէրն էլ, բարեկմութինն էլ, ասկակա-
նութինն էլ, մէ բանն է դուրթ...

ՄԻՔԱՅԵԼ, ՊԱՌԱՆՆԱ-ԸՆԿԱԾ:

ՓՌՂԲ:

ՍԱՐԳԻՍ

Հա՛, ասլրիս. դիփ փուղը, փնտղն ու փուղը. ա-
ռանց վուզ զիփ մէ զիրօշ: Փուզ ունիս՝ աշխարքը
քունն է, թէզուզ քաչալ ըլիս, թէզուզ լիմար
ըլիս, թէզուզ հուտած ըլիս, զիփունի համա սառը
շաքարը դուն իս, օչով քիմէն չի բեզրի: Դարդակ
խճամտանքն ու զիգութինը վունչիս:

ՄԻՔԱՅԵԼ,

Բաւական է, հայր, այդքան խրատները: Միթէ ես
ինքս չեմ հասկանում, որ աշխարհիս մեծ մասն ալդ-
պէս է. բայց այդ չէ նշանակում թէ այն վարմուն-
քը, որ ուրիշների կողմից անզամ ինձ զզուանք է պատ-
ճառում, ես ինձ թոյլ տալի անձամբ կատարել... Ես
նպատակ չունիմ ուրիշների պէս հարստանալ, և

Կաստատ կանոն եմ դըել որ ես միայն իմ սեպհական
աշխատանքիս լինիմ պարտական:

ՍԱՐԳԻՍ

Ո՞վ է խում, ախպէր, քու աշխատանքը քու ձեռ-
նեմէն. աշխատէ, աշխատէ, շատ լաւ էլ իս անում.
Ասում գուրեկանն էլ էտ է. ամա հազիր հաղթա-
բաշի աշխատանքը վուր քիզ թաղումի պէս թաւա-
գա ին անում, ինչի լս էրեսդ շուռ տալի:

ՄԻՔԱՅԵԼ

Այսինքն պարոն նրբիւանուիլ հարստութեան մէկ
մասը, որ նա տալիս է իր աղջկան իբրև բաժինք:

ՍԱՐԳԻՍ

Հա, ինչ վիս բանէ, ախար:

ՄԻՔԱՅԵԼ

Այն որ ես նրա աղջկան չեմ հաւանում, և երբէք
էլ չեմ կարող հաւանիլ: (Լոռութիւն:) Ես արդէն ըն-
տրել եմ մի այնպիսին, որնոր կատարելապէս համա-
պատասխանում է իմ գաղափարներին... Եւ եթէ այդ
ես զինէր՝ ես մեծ անպատճառթիւն կը համարէի
փողի համար պսակուիլ:

ՍԱՐԳԻՍ

Տօ, մենակ դուն խօմ չիս քախկումը. ախար մէ
ծախկալ գարունք գու քան, մենակ դուն դուս էկամք
գիգունն աշխարքումը. չէ վուր քու ննդըրտիքն էլ
քի սկէս ուսում առած էին... Աբա վուրն արաւ ինչոր
դուն իս ուզում անի. ով ուզից մուքթ ախչիկ, վուր
դուն իս ուզում. ով ածկի էրիտ բահը ու բաժըն-
քին, վուր դուն իս ածկի տալի... Քանիսի անումը
գուղիս տամ: (Լոռութիւն:) Էկան, վրփուտացին, քու

հանգի բանիր շատ ասին. էս մարթութին, ասում է. էս
սէր ու միաբանութին, ասում է. էս խղճի պահպա-
նութին, ասում է. ամա վիրչը վուրդի էրկու հազար
ու ՚երեք հազար թումնի ձէն իմացան, տուտինդ
տալով ձեռն էնդի կացրին: Տիս, վուր միր քաղաքը
նրանք լաւ ճանչան ու էնէնց էլ վարուեցան, հիմի
գուն լս ուզում օրինակ դառնա դիմունանց համա:
ՄԻՔԱՅԵԼ

Ես ոչ ոքի համար օրինակ չեմ կամենում դառ-
նալ, հայր, ինչ որ խելքս կտրում է ու խղճմտանքս
տալիս է, այնպէս եմ վարվում: Թմ ընկերներից մէկ
քանիսին օրինակ ես բերում, նրանք ինչ լաւ օրինակ
կարող են լինել. ամերոջ իրանց կեանքում աշխա-
տում էին արդարութեան սանգուխքը բարձրանալու,
բայց վերջին աստիճանին չհասած ճանապարհից
յանկարծ վայր զցեցին իրանց: Ես տեսնում եմ որ
շատերի համար նրանք պարծանք են, շատերը երա-
նի են տալիս նրանց, որ ոչինչ չունէին ու այժմ
երեք յարկանի տներ են ձգել, կառք ու կարետաներ
սարգել. բայց այն մարդու համար, որ ունի այստեղ
(Զետէլ կրծքին է եփու-ն:) սիրտ ու ազնուութիւն,
նրանք կորցրին իրանց մարդկացին արժանիքը... Ձէ,
չէ, հայր, չէ, իմ համոզմունքները խորը արմատներ
են ձգել սրտումս, և միայն այն ժամանակ կարելի
է հանել նրանց, երբ խելքս կը կորչի և սիրտս կը
մեռնի: (Լոռութիւն:) Ստեփան Պանէլիչի աղջիկն ինձ
բոլորովին յարմար չէ, նրա համար շատերը կան,
որոնք նրա փողով և բաժինքով իրանց շատ և շատ
բախտաւոր կը համարեն:

ՍԱՐԳԻՍ

Բաս քու միտկն ի՞նչ է, հէնց ապրիս, դրուստն
առան:

ՄԻՔԱՅԵԼ.

Իմ միտքն արդէն քեզ յախնի է, հալր, իմ ընտրածն
Անանին է, բացի նրան ես ոչ ոքի հիտ չեմ կարող
կեանքս կապել: (Ա. Պ. Գ. Գուշակ բառաւմ է հօր չեաց:)
Ազաքում եմ քեզ, հալր իմ, արգելք մի՛ լինիր եր-
ջանկութեանս. զու խու դիտես, հալր, որ մինչեւ ծանր
ու բարակ չէի մտածել, ես արտիս հաստատ չէի
խօսիլ: Իմ սէրը մի՛ նմանեցնիլ այն սիրովն, որ մարդ
մի գեղեցիկ աղջիկ է տեսնում և նրա գեղեցիկութեամբ
խկոյն յափշտակվում: Անանու խելքը, խղճմտան-
քը, վարքը, ինչպէս մէկ բան կշռես, այնպէս կշռել
եմ, և հաստատ համոզուած եմ որ նա այնպիսի կին
կը լինի ինձ համար, որպիսին ես վազուց ցանկանում
էի և երազում:

ՍԱՐԳԻՍ, Ա-Կ-Ե-Ր-Ը Բ-Ա-Ր-Ց-Ր-Պ-Պ-Յ-Ն-Ե-Ղ-Ջ-Ը

Հաւ իս ասում, վարթի, ամա վուր վուզ չունէ.
Պուն «Հա ու չէ» չխ իմանում. ախար զուն ու նա
դիփ մենակ խօմ չիք մնալ աշխրքումը, չէ վուր
էքոց, էլօր վարթիք կուլին, էն վուրթիքանցը
չէր ծծմէր է հարկաւոր, իժում պահնուրդնիր, իժում
ուսում, ինչով իս տալի, ինչով: Իմ կալինքը խու դի-
դիս, զարթնի քիզ ՚եր՛ք վուրթի էլ ուրիշ ունիմ.
Ի՞նչ կու ննդնի ձիզ մարթադրուխ, լիշին էլ ամութ-
է, ու քու տօնկուզով իսօմ ապրիլ չի ըլի քախկումը:
Քիզ վուր էտղագա ուսում տուի, քու խճմտանքը

Դաբուլ կ'օնէ վուր քու վուրթիքը քիզ վրայ պակաս
ուսում ունենան:

ՄԻՔԱՅԵԼ.

Իմ որդւոց ուսումը, հալր, ինձ այնքան թանկ չի
նստիլ, որքան քեզ: Երեխայոց սկզբնական կրթու-
թեան և գաստիարակութեան համար ոչ այնքան
ուսուցիչներ են հարկաւոր, որքան բարի և կրթուած
մարեր, և այն մայրը Անանին է: Ոչինչ չեմ կա-
մենում քեզանից, հալր, ինչ ծախսել ես ինձ վրայ
չափից աւելի եմ համարում, մնացած կարողու-
թիւնդ թող միւս որդւոցդ լինի. ես միայն քո օրհ-
նութիւնն եմ խնդրում, հալր, օրհնիր ինձ այս ճա-
նապարհի վրայ, էլ ուրիշ հարստութիւն հարկաւոր
չէ ինձ: (Ա. Պ. Գ. Գ. Գուշակ բառաւմ չեաց:) Ոչինչ չեմ
ասում, հալր, համաձայնվում ես: (Գլուխամ է:) Խընդ-
րում եմ, հալր, մէկ «Այս», մէկ «Այս», և քո Միքա-
յէլը ամբողջ իր կեանքումը բախտաւոր կը լինի:

ՍԱՐԳԻՍ, ՎԵՐԵՒԿ-Կ-Ա-Ն-Ե-Ղ-Ջ-Ը Գ-Ե-Ւ-Շ-Ա-Ն-Ե-Ղ-Ջ-Ը

Բարէմց ասա, վուրթի, վուր դանակը վիկալնիմ
ու իմ ձեռով բողազդ զուս կոտրիմ էլի: 2Է, Միւնէիլ
ջան, չէ վուրթի, էտ չկելու բան է. խելքդ մօդ
արա ու դուն ինքդ կու իմանաս վուր եանդիշ իս:

ՄԻՔԱՅԵԼ.

Մինչեւ այսօր քեզ խոնարհ եմ եղել, հալր, խընդ-
րում եմ քեզ իմ խոնարհութեան կապը մի՛ քանդիլ,
մի՛ հասցնիլ ինձ այն տեղը, որ մէկ քանիսի նման իմ
հայրական տունը թողնեմ և գնամ իմ ուզածը կատարեմ:

ՍԱՐԳԻՍ

Հաթաթէք էլ իս տալի, էտէնց իս վշարում իմ
ամաղը:

ՄԻՔԱՅԵԼ

Քո ամաղը—երախտիքը որ հասկանալիս զինէի,
հալր, ալսքան էլ չէի աղաջիլ:

ՍԱՐԳԻՍ, ՀՊԱԿԱՆԱՂԹ:

Իմ աղանչաքը խիստ իս լսում, վուր քու աղան-
չաքը ևս լսիմ: Ես իմացիլ իմ պստիկը մինձին ան-
դամ գնէ, չէ թէ մինձը պստիկին:

ՄԻՔԱՅԵԼ, ՎԵՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ:

Համաձայն եմ, հալր, բայց ճշմարիտ խօսքն էլ
պէտք է յարգել:

ՍԱՐԳԻՍ, ՀՊԱԿԱՆԱՂԹ:

Մէ ճշմարիտ էլ դուն կուլիս ինձ մօդ, քու գլխի
պատռուիլը զիդենալ. չէ էլ ամանչում, ինչ հանդն է
հիդս խօսում: (Լ. Ա. Տ. Ե. Ա.): Ես քիզ վիրչի անզամն իմ
ասում, տուտուց բանիրը զլխեմեդ հանէ ու Ստոփան
Գանէլիչի ախչկան ուղէ, թէ չէ, Աստուծ զիդենալ,
էլ ինձմէն չլս սլքնի, տանեմէն դուս կ'օնիմ էս
սահաթիս, էլ քիզ չլմ մնա:

ՄԻՔԱՅԵԼ,

Ինչ կամենում ես այն արա, հալր, իմ ընտրածը
Անանին է:

ՍԱՐԳԻՍ

Վուր քու ընտրածն է, դէ զնա ուղէ ու էլ վուր-
թի մի լիշուի իմը, տեսնիմ վժւնց իս ուղում. ամա
նեփոր դուն Անանուն ուղիս, էնչախը պարձեցի:
(Լ. Ա. Տ. Ե. Ա.): Էտնգնում է Միտոյէլի առաջ և չեռուն իր

իրծուն լուսում: (Լ. Ա. Տ. Ե. Ա.): Վիկուէլ, ևս թէ քու օխտեմէն
չէկալ, (Զ. Ա. Տ. Ե. Ա. Պ. Ռ. Ե. Ա.): բաս էս րիխս
էսով չի ըլի:

ԴԱՆԻՍ և ԳԵՐԱՄ յակ դանից:

ՄԻՔԱՅԵԼ,

Իսկ ես շուտով կը վերջացնեմ զործը, թէև յաւի-
տեան երեսիս չնայես:

ԴԱՆԻՍ և ԳԵՐԱՄ աշ դանից: Վ. Ա. Տ. Ե. Ա. Պ. Ռ. Ե. Ա.

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Սուրամենց տանը մի շքեղ սենեակ երեք դոներով՝ աջ, ձախ և մէջ տեղու Սենեակի աջ կողմէ դրած է զիվոն, առաջեւը մի սեղան թանկապին ծածկոցով եւ կողբին մի բալկանթոո. իսկ ձախ կողմէ պատուհանի մօտ փոքրիկ դաշնամոր, մէկ բորբակ սեղան՝ նոյնպէս ծածկած ափոցով, եւ աթոռ Վերջին սեղանի վրայ դրած է ծեռապործի փոքրիկ գամրիդ։ Խորում աթոռներ։ Պատուհանները եւ դռները ծածկուած են պապիներով։

ՏԵՍԻԼ ԱԹ-Շ-ԶԻՒՑ

ԵԱԳՈՐ ՍԻՄԾՆԻՉ, ուսուցներով ու սղիտովէ ենու հրձէին տիշտի վրայ նստած, շրագեր է էտրուս, ՍԱԼՈՄԻ, դէ՛ս ու բէ՛ս, բաղկալուսուն վրայ նստած, սուրճ է պապրասուս, ԱՆԱՆԻ, յան հոշին ալուսուն վրայ նստած, բուրբակ սէշտնի հօտ գերչ է էտրուս։

ՍԱԼՈՄԻ

Կրնէկ զիդենամ քանի կարթաք։ (Անանուն։) Էտ ինչ զիր է, վուր էրկզուան դէսը ձեռնէդ յլու վէր զցում։

ԱՆԱՆԻ

Օ՛հ, շատ հետաքրքիր զիրք է, մալր իմ, ես դեռ այսպիսի պատմութիւն չեմ կարդացած։

ՍԱԼՈՄԻ

Մէ տուսուց բան կուլի էլի։
ԱՆԱՆԻ

Զէ, մալր իմ, դու սխալվում ես։
ՍԱԼՈՄԻ

Բաս չէ ու խիստ խելօք լմքնիր կուլի գրած։ (Տաշը դի բաժանէ սուրճ նոգօր Սիմեոնին։) Կաթ էլ ածիմ։
ԵԱԳՈՐ ՍԻՄԾՆԻՉ

Վունցոր գուզիս։

ՍԱԼՈՄԻ

Ի՛հ, ուցնավոր իտ, քան. նև խօմ չլմ պիտի խմի։
ԵԱԳՈՐ ՍԻՄԾՆԻՉ

Լաւ, լաւ, ածմ։

ՍԱԼՈՄԻ, ածում է էալը։

Աշըմ... (Անանուն։) Էտ զրիլն է գժուեցնում զիփ ձիզ։ Ես պիտի Միլսէիլին ասիմ վուր էլ զրիլ չտայ քիզ։

ԱՆԱՆԻ

Հաւատան, մալր իմ, որ եթէ լաւ զիրք զինէր՝ Միքայէլլ չէր տալ ինձ։
ԵԱԳՈՐ ՍԻՄԾՆԻՉ, շրագերը բանաշուն և բաժանը խոսնելով Անանին զուրթ է ասում, Սալօմէ, Միլսէիլի տուած զիրը լաւը կուլի։ Էդ ինչ է, բօման է, Անանի։
ԱՆԱՆԻ

Ո՛չ, սա բօման չէ, հալր իմ, սա մի խեղճ աղջկայ պատմութիւն է, որ սարսափելի տանջանքներ է կրը լում ձնողների ձեռքիյ։

ՍԱԼՈՄԵ

Հալրաթ դժութին է ելի անում ու էնդոր էլ
տանջում ին էլլ:

ԱՆԱՆԻ

Ընդհակառակը, մայր իմ, նա շատ խելօք և պար-
կեցա աղջիկ է գուրս բերած ախտեղ. խեղճը լուռ-
ու մունջ տանում է այդ նեղութիւնը չորս պա-
տի մէջ:

ՍԱԼՈՄԵ

Այ, բարաքալա ախջիկ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ

Իժում վունց է վիրչանում էտ պատմութինը:

ԱՆԱՆԻ

Գեռ չգիտեմ, հայր, ես շուտով կը վերջացնեմ
և կը պատմեմ քեզ:

ՍԱԼՈՄԵ

Լաւ է, լաւ, արի քու փնջանը վիկար:

ԱՆԱՆԻ

Այս, մայր իմ, ես կը վերցնեմ, թող գեռ մնալ
այդտեղ:

ՍԱԼՈՄԵ

Օղօնց կի ձեռիդ զիր ըլի ու էն էլ Միկելի տուած
զիր, քիզ համա զավա է ու զավա, էլ զավա ինչ կ'օ-
նիս:

ԱՆԱՆԻ

Օ՛, ես Միքայէլին շատ եմ պարտական, մայր իմ,
եթէ նա չլիներ, ես շատ բաների վրայ այսքան
հասկացողութիւն չէլ ունենալ:

ՍԱԼՈՄԵ, յանեւը նետած:

Լաւ, լաւ.... Ամա նա էլ ինչի՞ ուշացաւ, թէվուր էն
օրը խոստացաւ վուր զավի վրայ էսօր միզ մօդ կուլի:
ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ

Ուր է, նես էլ նրան իմ մնում, մէ էս թուխտն
իրան էի տուր. էն խիզճ կնդան չիմ զիդի ինչ ասիմ:
ԱՆԱՆԻ

Հանդիստ կաց, հայր իմ, երբ Միքայէլը մի բան
խոստացաւ, անպատճառ կը կատարէ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ, յանեւը Սալմենին:

Դուք նրան իք հաւնում, նա էլ ձիզ. էլ ինչ է
շանջլայնում հէր օխնածը:

ՍԱԼՈՄԵ, Եագոր Այհանիչին, նայնպէս յանեւը

Ինչ է ասում, մինք հաւնում ինք ու դուն չիս
հաւնում. ամա նրա ուժամուր հօրն ինչ անէ մարթ,
նրա քօփակ զլուկն էլ: Ես Միկելի միտկը լաւ գի-
դիմ, էրէզ նրա մօր հիդ էլ խօսեցայ. ջէր ուզում է
հօր կամքն ըլի միթամ, թէ չէ մէ խօսկ վուր ասիմ:
հօր էւէտ հազիր է, քու արիւը:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ, պատրոստէլով ծխանդակը:

Պուրթ, ինչ ջահիլ է... Անանի, մէ օտկէ: (Անանին
զէր է հենում, ծխանդակը վաստամ - և յէտոյ հրին եր ունչը
հասպառմ յէտագործուլ պարապում:) Նրա վրայ էլ... (Ծիե-
լուզ:) լաւ տղայ կուլի քախկումը:

ՍԱԼՈՄԵ, էրէար յագուց հանելով:

Թէ վուր կ'ունենանք, Եագոր ջան, նես գիդիմ
լաւը վուրն է. ամա ինչ անիս, միր կարողութենի
գօրա Միկելին էլ շատ է, օղօնդ նրա հէրը կամք
տայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Բաս ումն իս ուզում քու մտկումը, վուր նա էլ շատ է:

ՍՈԼՈՄԵ

Գուն մէ էրկու հաղար թուման տնեւ, ևս գլուխմ ումնոր կու տամ ախչկաս:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Ասինք ունիմ ու տուփ էլ... (Պատառէ յէտքը յժելու) Հահա, քիզ փէշքաշ:

ՍՈԼՈՄԵ

Ջէր էս վուր ինչ գուզէ ուսում առած ըլի ու լաւ տղալ, քախկցու վուրթուն ախչիկ չիմ տա:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Պօլկօվնիցա իս ախար, վունց կուլի: (Ծիծալում է:) Հահ, Հահ, Հահ... Բաս Էսօր էրոց վուր նս քիզ դէնէ-րակա շինիմ մէ բաշ, Սալօմէ, աւտաս Միխէլին իսկի տուն էլ չմողնիս, ըս:

ՍՈԼՈՄԵ

Հիմի խօ խիստ ուրախ իմ ու մնացիլ է էնչախը: ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Վահ, գէնէրալշա Սալօմէ... (Վարչէնալու) Վաշէ պրէվասագիտէլսովո... Ըհը՛, ով գիմնալ քիզ: (Ծիծալում է:) Հահ, Հահ, Հահ...

ՍՈԼՈՄԵ

Հահ, ծիծաղի, ծիծաղի, ինչով իմ ուրիշներեմէն պակաս, չի սաղ գայ թէ ինչ է: Ով գէնէրալշէք ին ինձ վրայ լաւէն ին:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ, ծիծալում է:

Հահ, Հահ, Հահ... Վրայ էրկուսը:

ՍԱԼՈՄԵ, հէղանակը

Վրայ էրկուսը վուր խղճութինը շատ բան կ'օնիլ տակ մարթու:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Վրայ ներիքը:

ՍԱԼՈՄԵ, բարչանալու

Վրայ ներիքը վուր քու զլուխ չունիմ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ, ծիծալու

Հահ, Հահ, Հահ... Գուն ինչ կ'օնիս, Անանի:

ԱՆԱՆԻ

Ես այն կ'ասեմ, հայր իմ, որ Միքայէլը շատ բարի և աղնիւ երիտասարդ է:

ՍՈԼՈՄԵ, բարչանալու Անանու Նըոյ:

Էլնէկ զիզենամ քիզ ով է խօսեցնում:

ԱՆԱՆԻ, աշշուելու

Մայր, ես պատասխանում եմ իմ հօրը:

ՍԱԼՈՄԵ

Ելի:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Նու, նեփոր դուն չարացար, Սալօմէ, դիփ մէտի փչացաւ:

ՍՈԼՈՄԵ, շարունակէլու

Քանի ջէր իմ քիզ ասի վուր նրան իմ հակառակ մի խօսեցնի. ինչ կարք է:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Հահ, լաւ, զուն զիզիս, Սալօմէ, կնզգերանց բանումը նս չիմ խառնվում... Փաս, փաս, նս փաս:

ՍՈԼՈՄԵ

Կտէնց, նս քիզ ասում իմ վուր քու բան չէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ, զենուռովով իտանին համայստն չե՞

իտնգնուած է և աղ չեացը ճակատին պահուամ:

Ալուշախւա:

ՍՈԼՈՄԵ, սպաս յապահին սարսելով:

Նու:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ, չեացը ճակատին շուր գուշը
նա լէվա կրուդօմ, մարշ:
Գնուած է բեռի բեր երբացը:

ՏԵՍԻԼ Բ

ՆԻԱՆԻ, ՄԻՔԱՅԻԼ

ՄԻՔԱՅԻԼ, մասուած է մեջ ուսանից:
Բարի օր ձեզ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

ԱՌ, Միկայիլ, արի է, քիզ ինք մնում:
ՄԻՔԱՅԻԼ, Ետքօր Սիմոնիչ չեացն ասանելով:
Ինչպէս էք:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Ճատ լաւ, վունցոր տեսնում իս:

ՄԻՔԱՅԻԼ, Սալշի չեացն ասանելով:

Բարև ձեզ, տիկին... (Սնանուած) Բարև, օրիորդ:

Գնուած է բեռի Անտանին:

ԱՆԱՆԻ, բեր գուշը:

Բարև ձեզ, Միքայիլ, (Սիմոնիչ չեաց էն պաշին) ինչի այլքան ուշացաք, անցեալ օրը դուք չասացիք որ այսօր ազատ էք և ամբողջ օրը մեզ մօտ կ'անցկացնէք:

ՄԻՔԱՅԻԼ,

Այս, օրիորդ. միայն ներտղութիւն, գործ պատահացաւ:

ԱՆԱՆԻ

ՕՌ, գործ, միշտ գործ...

ՄԻՔԱՅԻԼ,

Ի՞նչ արած, օրիորդ, քանի որ մարդ ստիպուած է:
Գնուած է բեռի Սալշին. Անտանին նստուած է
իր որեւէ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Համեցիք, նստի:

ՍՈԼՈՄԵ

Նստի, Միկայիլ ջան:

ՄԻՔԱՅԻԼ, ալուսը հապ չաշելով

Կերիցիք, մի փոքր ուշացայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ, հրամիելով ուկանի վրայ նստել, ուր
ինչն էլ է նստուած:

Եսուի, էսուի, դիվանի վրայ, ինձ մօդ, Միկայիլ ջան:
ՄԻՔԱՅԻԼ,

Գուը առանձին սէր էք ցոյց տալիս դէսի ինձ,
Եսուի Սիմօնիչ:

Նստուած է ուկանի վրայ:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻՉ

Գիզէ Աստուծ, վուր քիզ (Սնանուած վրայ պաշը)
Նրամէն չիմ ջողում:

ՍՈԼՈՄԵ

Քիզ վուր չոփինք, Միկայիլ ջան, բաս ումը սի-
րինք, քիզ մի չի սիրի: Աքա կավէն վունց իս կա-
մենում կաթնոնի, լժէ անկաթ:

ՄԻՔԱՅԵԼ,

Եթէ կը ներէք ինձ, ես բոլորովին չեմ կամենում:
ՍՈԼՈՄԵԼ:

Ի՞նչ է էլի ձիղ էսօր. վոհց դուն իս ուզում,
վունց Անանին:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻԶ

Մէկմէկու մօղ զրադ կուլին էլի, Սալոմէ:
ՍՈԼՈՄԵԼ:

Ա!, Անանու փնջանն էլ էստի է սառում:
ԱՆԱՆԻ, վերէնառը տէշից:

Ես կը խմեմ, մայր:
ՄԻՔԱՅԵԼ, այսպէս վերէնառը:

Մէ նեղանաք, օրիորդ, ես կը բերեմ:
Տանւմ է Անանու բաժակը:
ԱՆԱՆԻ, առնելով բաժակը:

Ճնորհակալ եմ, Միքայէլ. իսկ դուք:
ՄԻՔԱՅԵԼ,

Ճշմարիտ, ցանկութիւն չունիմ:
ՍՈԼՈՄԵԼ, Անանուն:

Արի, արի, Անանի, մէ քու ձեռով պատրաստէ,
ամս ինչ լաւ է խմում. քու շինածն ուվիս է դոր
դալի դրան:

ՄԻՔԱՅԵԼ, Ճպառը:

Դուք շատ բարի էք, տիկին:
ՍՈԼՈՄԵԼ:

Բարի հրիշտակը պահէ քիղ, վորթի:
ՄԻՔԱՅԵԼ ԱՇՀԱՆԿՄ է:

Դուք տիսուր էք, Միքայէլ, ինչ է հանդիպել:

ՄԻՔԱՅԵԼ,

Առանձին ոչինչ:

ԱՆԱՆԻ

Օ՛, ես կիմանամ, առանց պատճառի չէ: (Գնաւմ
է սուրճ՝ պապրառիւշը:) Գու նկատում ես, մայր, ինչ-
պէս տիսուր է:

ՍՈԼՈՄԵԼ:

Ով զիղէ, ինչ զարդ ունէ:
ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻԶ

Առանց զարդ ծիսն էլ չի ըլի, ասում ին: Քէփիդ
ցա էրևում, Միկուլի:

ՄԻՔԱՅԵԼ,

Այն, մի փոքր լաւ չեմ զգում ինձ: (Թէրեւում է
Անանու գիրքը, յէպոյ չգեցը աւշտնի գրայ, առանցին:) Պէտք
է իսկոն վերջացրած:

ԵԱԳՕՐ ՍԻՄՈՆԻԶ, Սալոմէն, ցածր:

Ճզրած է էրևում:

ՍՈԼՈՄԵԼ, այսպէս:

Խիստ:

ԱՆԱՆԻ, բաժակը տալով Միքայէլին:

Ահա և ձեր բաժակը... (Միքայէլը ոշշունամ է:)
Բայց ինչ է պատահել ձեզ, Միքայէլ, ասացէք
խնդրեմ, իս ձեզ երբէք այդպէս չեմ տեսել. ձեր
դէմքը փոխուել է բոլորովին...

ՄԻՔԱՅԵԼ, բաժակը դնելով աւշտնի կը:

Աւշադրութիւն մի գարձնէք, խնդրեմ, վոքը ինչ
դլուխ ցաւում է: (Ցածր) Օրիորդ, ձեզ հետ առան-
ձին խօսելիք ունիմ:

Առանձին:

Ա.ՆԱՆԻ

ՄԻՔԱՅԵԼ

Այս... (Բարձր:) Արդէն բաւականին կարդացել էք
այդ գիրքը, ինչպէս է, հաւանում էք...

Ա.ՆԱՆԻ, Աստեղով իր աւշը:

Օ՛, շատ հետաքրքիր է, շատ շնորհակալ եմ.
բայց ափառո որ տկար էք, ես այսօր կամենում էի
լուն ձեր կարծիքն այս զբքի մասին:

ՄԻՔԱՅԵԼ

Վերջացրէք, վերջացրէք, օրիորդ, մենք այդ զբքի
մասին շատ կը խօսենք:

ՍԱԼՈՄԵ

Հէնց ապրիս, Միխելի ջան, Էլ էտ համդի զիր մի
տա դրան. իրիզուն ինքու կէսպիշիրը կարթում էք
ու էսօր սաղ օր ձեռնէն չէ վեր զցի ջէր. քանի
կարելու ու զորձելու բան ունէ իժում:

Ա.ՆԱՆԻ, ՎԵՐԺԵՆՈՎ ՅԵԿԱԳԻՐԸ:

Ես իմ գործը շինում եմ; մայր:

ՍԱԼՈՄԵ

Սու, լսու է, ձէնդ: իբրէկ զիգենամ ինչ է զուս
դալի էտ կարթալեմէն, հաց չէ տալի ու ջուր:

ՄԻՔԱՅԵԼ

Ի զնուր էք այդպէս դասում, տիկին:

ՍԱԼՈՄԵ

Բաս ինչ է:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, ՍՊԵՇԵՒՆ:

Թողէք էտունք... (Միշակէնին:) Մէ արի, նատի
էստի հալա... Այ, էն խիղճ կնդայ լժուխտը, վուր

ասում էի: (Տալով լեռաղլը:) Տիս, թէ կանաս օտկի՛,
հէնց ապրիս:

ՄԻՔԱՅԵԼ

Մեծաւ ուրախութեամբ:

Նստա՞մ է աջ հողմը և լուս էաբդում է:

ՍԱԼՈՄԵ, ծանր պայշէրով հապէնում է Անտառան, ցածր:

Արա մէ տեսնիմ վնանց է գուս գալի: (Զեւուգործը
վէրցնելով) Էս սիւ թիլն մւր իս խառնի, քա՞:

Ա.ՆԱՆԻ

Միթէ չէ սազում, մայր, կարծեմ դա աւելի է գե-
ղեցկացնում:

ՍԱԼՈՄԵ

Խոկի էլ չէ. կարմիրն ուփրօ լաւ կու'լի:

Ա.ՆԱՆԻ

Ինչպէս կը հրամայիս, մայր իմ:

Շաբանակում էն խօսել յեւագործի հասին:

ՄԻՔԱՅԵԼ, Եագօր Այհանիչին:

Սա մի դժուար գործ չէ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Մէ չարա արա, արիւդ սիրլա. էն կնդայ օխ-
նանքը քիզ հէրիք է:

ՄԻՔԱՅԵԼ

Միամիտ կացէք, ես հէնց այսօր կ'աշխատեմ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ

Այ, ապրիս, վարցի զուզիս էտ է: Ախար կանգնիլ
ին վաղ ին ուզում. ինքն ինչ ունէ էն խիղճ կնիկ-
արմատը, վաւր ուրիշին ինչ տայ է:

ՄԻՔԱՅԵԼ, վէրէնաղը աւշից:

Փող, փող ու միշտ էլ փող...

ՍՈԼՈՄԵ

Ի՞նչ անիս, վուրլժի. էս ժամանակին ինչոր վուր
է, խօսկը վուղն է:

ՄԻՔԱՅԵԼ

ԷՇ, տիկին, դուք էլ հօրս պէս էք դառում:
ՍՈԼՈՄԵ

Թէ կի առանց վուզ մարթը մարթ չէ:
ԱՆԱՆԻ

Ի՞նչ ես ասում, մայր իմ, միթէ ով վող չունի,
նա մարդ չէ:

ՍՈԼՈՄԵ

Բաս չէ ու...

Անանին զբրմայած նայում է հօրը:
ՄԻՔԱՅԵԼ

Մի դարմանաք, օրիորդ, մայրդ կրկնում է այն,
ինչ որ շատերն են ասում... Որքան էլ մարդ զի-
տութիւն ունենայ, որքան էլ աղնիւ զզացմունքի,
հանճարի տէր լինի եթէ վող չունի, նրան մազդա-
տեղ չեն դնիլ... Ամենաերևելի մարզը նա է արտեղ,
ով շատ վող անի, թէեւ լիմարներից ու տղէտներից
մէկը լինի... Յաւալի լան... շուտով կ'ուրեն վողը
Աստուծոյ տեղ պաշտել...

ԵԶԳՈՐ ՍԻՄՕՆԻՉ

Ճատ զրուստ իս ասում, Միլսէիլ ջան:

ՍՈԼՈՄԵ, անցնելով բէմ աջ իւշմ:

Երանի կուլժը, վարժի, էտէնց չեր էլի. ամա
շշնարքը գուն իս չլու կանայ դրսով:

ՄԻՔԱՅԵԼ

Ես ինչ կարող եմ. ես մի հասարակ մահկանացու

եմ: Բայց զզուելի է, երբ մարդիկ փողի համար իրանց
մոռանում են և ամէն աններելի միջոցներ գործ
դնում՝ ուրիշի աշխատանքին տիրանալու:

ԵԶԳՈՐ ՍԻՄՕՆԻՉ

Այս, Միլսէիլ ջան, պիտի քիպէս մէ քանիսն էլ
ըլին, վուր լինձպէս մարթու բանն էլ լաւ գայ:

ՄԻՔԱՅԵԼ

Մեծ պատիւ էք անում ինձ, Եագօր Ալմօնիչ:

ԵԶԳՈՐ ՍԻՄՕՆԻՉ, ՎԵՐԿԵՆՊՐՈՒՅ

Երեսպաշտութիւն չիմ անում, զիդէ Ասուուձ: (Մէ-
այնուշտահայում է:) Ճաշին իս միզ մօդ իս:
ՍՈԼՈՄԵ, Եագօր Ալմօնիչն:

Բաս, քա. թէ վուր առուտեան էւէտ ասի:

ՄԻՔԱՅԵԼ

Ճատ շնորհակալ եմ, ես ինքս ինդրեցի օրիորդին:
ԱՆԱՆԻ

Այս, հայր իմ, պարոն Միքայէլը այնքան բարի է,
որ խոստացաւ ամբողջ օրը մեղ նուիրել:

ՄԻՔԱՅԵԼ

Օ՛, օրիորդ, ինձ համար առանձին ուրախութիւն
է այդ:

ԵԶԳՈՐ ՍԻՄՕՆԻՉ

Միզ համա աւելի ուրախութիւն է, Միլսէիլ ջան.
Խիստ լաւ իս փիքը արի... Ես մէ հարկաւուր բան-
ունիմ, շուտով լիդ գու քամ... Սալօմէ, մէ արի, մուն-
դիրս հանէ: (Աջ դաշտից բնույթն իւնչում է:) Է՛ի...
ՍՈԼՈՄԵ

Ես սահալժիս, Միլսէիլ ջան:

Հետքեռում է Եագօր Ալմօնիչն:

ՏԵՍԻԼ Պ

ԱՆԱՆԻ, ՄԻՔԱՅԻԼ

ԱՆԱՆԻ

Միքայէլ, դուք վշտացած էք:

ՄԻՔԱՅԻԼ

Այս, շատ...

ԱՆԱՆԻ, ՏԵՇԵԿԱՐԱՆ ՄԻՔԱՅԻԼԻն:

Ում վրայ, և ինչի համար:

ՄԻՔԱՅԻԼ

Մէկ օր կ'իմանաք:

ԱՆԱՆԻ

Զէ, չէ, խկոյն. աղաջում եմ ձեզ, Միքայէլ, ապացէք, ինչ է ձեր նեղութեան պատճառը. միթէ ինձ այլու ձեր բարեկամը չէք համարում. միթէ չէք կամենում ինձ ձեր նեղութեանը մասնակից անել. ասացէք ձեր բարեկամուհուն, եթէ իրաւի ձեր բարեկամն եմ:

ՄԻՔԱՅԻԼ

Միթէ դուք կասկածում եք. որքեմն ով է իմ բարեկամը, եթէ դուք չէք... Լաւ իմացէք, Անանի, որ ձեզանից առաւել թանկաղին բարեկամ ես ոչ ոք չունիմ այս աշխարհում:

ԱՆԱՆԻ

Հասկա ինչ է պատճառը. ասացէք, ինդրեմ, Միքայէլ, յախտնեցէք ձեր նեղութիւնը: Հաւատացէք շեմ կարող հանդստանալ, մինչեւ չպատմէք ինձ բոլորը:

ՄԻՔԱՅԻԼ

Հօրս հետ սաստիկ կռուեցի:

ԱՆԱՆԻ

Օ՛, Միքայէլ, այդ ինչ էք ասում. միթէ ծնողների հետ կարելի է այդպիսի բան անել:

ՄԻՔԱՅԻԼ

Ամէն բանի մէջ չափ ու սահման կալ, Անանի... Մինք, ի հորկէ, պարտաւոր ենք երախտագէտ լինել ղէպի մեր ծնողները՝ յարպէլ նրանց, սիրել, պատուել, օղնել, մինչեւ անդամ չինային մեր կեանքը, եթէ այդ հարկաւոր է. բայց կատարել նրանց անտեղի պահանջները, նրանց ստրուկը դառնալ, զոհել մեզ միմիստն նրանց կամակրութեանը բաւականաթիւն տալու համար՝ մենք ամենելին պարտական չենք:

ԱՆԱՆԻ

Այս, բայց հետաքրքիլ էր իմանալ թէ ախալէս ինչ պահանջ կարաղ էր ունենալ հալորդ ձեզանից, որ դուք այդ աստիճան վշտանայիք:

ՄԻՔԱՅԻԼ


Ներեցէք, ինդրեմ, այդ մասին միւս անդամ... Այժմ ես ուրիշ խնդիր ունիմ ձեզ հազարդելու:

ԱՆԱՆԻ

Այս, դուք առանձին խօսելիք ունէիք. (Համարէլ բեշով նստելու, ինչն էլ նստում է իր աեղը:) Խնդիրմ:

ՄԻՔԱՅԻԼ, նստում է այս ովհոցը. կործ շատութիւն:

Անանի, շատ ժամանակ է ինչ մենք միմեանց ճանաչում ենք՝ միմեանց սիրուն ու միտքը հասկանում... (Անանին շիռը լուսական է:) Խնդրեմ, վախենալու ոչինչ չկայ... Կեանքի վրայ մենք շատ անդամ ենք



Խոսել. մեր համոզմունքները դրեթէ մէկ են...
Ասացէք այժմ, Անանի, դոք համաձայն կը լինիք ձեր
կեանքը յաւլտեան կապել իմ կեանքի հետ: (Առաջին
ամսվածութեամբ գլուխը խոնարհեցաւմ է. շառավեճու:) Ինչի
ոչինչ չէք խօսում, Անանի... (Առանելով յետք:) Դոք
բոլորովին զրաւել էք իմ սիրով, իմ աւշը, իմ միտքը...
Ասացէք, Անանի, դոք կը կամենայիք իմս լինել:
ԱՆԱՆԻ, ամսված:

Թնողներիս հետ խօսել էք, Միքայէլ:
ՄԻՔԱՅԻԼ, յետք լուշնելով:

Ձեր ծնողների կողմից ոչինչ արգելք չի լինիլ,
Անանի, ես այդ մասին բոլորովին վստահ եմ:
ԱՆԱՆԻ

Իրաւ է, նրանք շատ են սիրում և յարգում ձեզ...
բայց և այնպէս խօսեցէք նրանց հետ:

ՄԻՔԱՅԻԼ,

Այո՛, այո՛, կը խօսեմ... Ինձ նախ հարկաւոր էր
ձեր համաձայնութիւնը...

ԱՆԱՆԻ

Ես... ես... համաձայն եմ, եթէ, ի հարկէ, ծնող-
ներս էլ կը կամենան... Իսկ ձեր հայրը, Միքայէլ,
միթէ նա համաձայն է. ձեզ յայտնի է որ բացի իմ
սեպհական թողլ ոյժերից ես ուրիշ ոչինչ չունիմ:
ՄԻՔԱՅԻԼ,

Ինձ միայն ձեր սիրոն է հարկաւոր, Անանի:
ԱՆԱՆԻ, ամսվածը յետք:

Ա'ս, ազնիւ Միքայէլ:
ՄԻՔԱՅԻԼ, համբուրելով յետք:

Աժմ ես բոլորովին երջանիկ եմ... Ես ևս, Անանի,

բայի աշխատանքից ոչինչ չեմ կամենում ունենալ...
Պենք կը վարձենք մեզ համար առանձին տուն, կը
միացնենք մեր ոյժերն ու ձեռք ձեռքի տուած կ'աշ-
խատենք. կ'ապացացանենք աշխարհին, որ առանց
ուրիշի օգնոթեան կարող ենք ապրել...

ԱՆԱՆԻ

Օ՛, այն ժամանակ, Միքայէլ, ես քո հաւատարիմ
ընկերուհին կը լինիմ, ես կ'օգնեմ քեզ, կ'աշխատեմ
բաժանել քո լծի բոլոր ծանրութիւնը ինչքան հնար
է լինձ... Ես, կ'իրադորձեմ իմ երազած կեանքը...

ՄԻՔԱՅԻԼ, առից համբուրելով Առանու յետք:

Իմ ազնիւ, իմ քաղցր Անանի... Որպիսի երջանկու-
թիւն, ամբողջ կեանքս քեզ հետ անցնել... Ա՛,
թուղթը... (Վերինացիկ:) Ճտապեմ այս յանձնաբարու-
թիւնը կատարիմ... (Վերցնում է լուսալը. Առանին ևս
Հեր է հետամ:) Ես շտափ կը վերադառնամ և կը
խօսեմ ծնողներից հետ: (Համբուրելով յետք:) Ցտեսու-
թիւն, իմ թանկաղին Անանի:

Գուր է գնում մէջ է բանից:

ՃԵՄԻԼ Դ

ԱՆԱՆԻ, յետք ՍԱԼՈՄԻ:

ԱՆԱՆԻ, Բնակէ երկար շառավեճից յետք:
Ազնիւ, ազնիւ Միքայէլ. ինչքան սիրելիս է եղել
նա ինձ... Օ՛, որքան երջանիկ եմ ես այս բաղէիս...

ՍԱԼՈՄԻ, բար գոշով յախ բանից:

Միկուն ինչ էրաւ:

ԱՆԱՆԻ, ընկերութ հօր գերիշ:

Այս, մայր...

ՍՈԼՈՄԵ, փռք լաւաբենից յետոյ:

Ի՞նչ է, ի՞նչ է պատահի:

ԱՆԱՆԻ, աչերը սրբազնվ:

Միքայէլը... Միքայէլը խնդրում է իմ ձեռքը:

ՍՈԼՈՄԵ

Ի՞նչ, Միկուլին ուզում է քիզ:

ԱՆԱՆԻ

Այս, այս... նա խկոյն կը վերադառնայ և կը խնդրէ ձեր համաձայնութիւնը:

ՍՈԼՈՄԵ

Մուլափ, մուլափ, Անանի ջան, իժում ի՞նչ առաւ... հէրը կամք է տուի... ասաւ:

ԱՆԱՆԻ

Զդիտեմ, մայր իմ, նա այդ մասին ոչինչ չասաց ինձ:

ՍՈԼՈՄԵ

Ի՞նչ է առում, քա, բաս առանց իր հօրը։ Էտ իոմ առանց քեզ էլ դիմէի: (Քաղցրութեամբ:) Ուզում իս քարգուրձ անէ միզ էն մարթը։

ԱՆԱՆԻ

Ոչինչ չգիտեմ, մայր իմ...

ՍՈԼՈՄԵ

Կաւ զիդենաս վուր ինչըու հէրը կամք չտայ Դու վունչիչ բանով դարուլ չիմ անի... իմացար... Տէր Աստուծ, ի՞նչ պիտի ըլի Էս ջէհէներու բանը... (Նոսում է բէմ չափ հովը:) Ներան ով էր առում քիզ հիդ խօսի, չէր կանայ ջէր մէ ինձ հիդ մասլահաթ անի:

ԱՆԱՆԻ

Նա խկոյն կը դայ:

ՍՈԼՈՄԵ

Իժում դուն ի՞նչ ասիր, խօսկ տուիր:

ԱՆԱՆԻ

Այս, մայր իմ, ասացի որ ես իմ կողմից համաձայն եմ: ՍՈԼՈՄԵ

Վուկ քոռանամ ՚ես. առանց ինձ. Էտ է քու ախ-ըլկութինը:

ԱՆԱՆԻ

Ես նրան ասացի որ ես համաձայն եմ, եթէ իմ ծնողները ես համաձայն կը լինին. կարծեմ թէ ձեզ ընդդէմ չեմ վարուել:

ՍՈԼՈՄԵ

Լաւ է լաւ, դուն մէ էտունք վիքաղէ, օքմին դայ ի՞նչ կ'օնէ, տեսնինք իժում Աստուծ ի՞նչ է տալի: (Անտանին շուարուած հաւաքում է որպէս բոլոր պարագաները աշուաշէ վրայ. իսէ Սալօմէն, նոսկելու բեմ չափ հովը և շուրունկելով Անտանու չետագործը, առանցին:) Խիլքս չէ կտրում վուր էն քօվակը դարուլ ըլի արի... ամա ախսավազլախ նրա զիմին, վուզ չունիմ ու բաժինք, բաս ուրիշ ով գուզէ դար ու դարդակ ախչկաս:

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ, Ֆոնէլով մշկ դանից, առանցին ոչ ջանառմ է: Բարի լուս ձիզ:

ՍԱԼՈՄԵ, հղարքաբար վեր է չենում և ողջունում:
Աստծու ըալին, համեցէք. (Առանձին, պնդուած Ապր-
գիւը և Առանձին ողջունում էն Թեանց:) Թային կռուե-
լու է զալի հիգո. քու բեղալ զլուխն էլ... (Սարգսն,
առանձին:) Համեցէք, նստեցէք: (Առանձին, նսդեշով:)
Ի՞նչ էլաւ քիզ, մօդ արա ու տար էլի:

ՍԱՐԳԻՍ, նսդեշով:

իս ուր է Եագօր Սիմօնիչը. տանը չէ:

ՍԱԼՈՄԵ

Հիմի զռւ գնաց:

ՍԱՐԳԻՍ

Ռւփրու լաւ. քի մօդ կռւ խօսիմ:

ԱՆԱՆԻ, առանձին:

Ալս, Աստուած իմ, ի՞նչ է լինելու արգեօք:

Դողաշով առանում է սրճ' բաժակները:

ՍԱԼՈՄԵ

Հրամայէ, պարուն: (Այս Թշուցին Առանձին յակն էր չե-
տրան հօս կայր է գյուտ քէ բաժակ, որը կոտրվում է:) Ան-
շնուք, էտու կոտրիլն էլ ի՞նչ էր:

Առանձին դուրս է գյուտ:

ՏԵՍԻԼ 2

ՍԱԼՈՄԵ, ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ

Հաջաթ չէ. կռւլի շառն էտու վրայ անցկենայ...
Գուն ինձ ասա, իմ քուր, էս ի՞նչ օրէնք է. Կես մե-
ռիլ իմ թէ ջէր էլի զեղնի էրեսին ման իմ զալի...

Ախար առանց ինձ էտ հանդի բան բռնիլ կռւլի...
Էլ հէր ու վուրթութինը գանա վիր ննդաւ աշխըր-
քեմէն:

ՍԱԼՈՄԵ

Ի՞նչի վրայ իս ասում, ՚ես չիմ հասկանում:

ՍԱՐԳԻՍ

Խխստ լաւ հասկանում իս էլ ու գիդիս էլ: Ախար
էս իմ տղին ուր իք գժուեցրի. ՚ես բաց աչկով կռւ
թողնիմ վուր նա մուքթ ախչիկ ուզէ:

ՍԱԼՈՄԵ

Պիզ անմիզ իս միզ գնում, պարուն, ամէն մարթ
եր բանը զիգէ. թէ կի քու տղէն միզ է հաւնում
ու մինք էլ նրան, էտումը ինչո՞վ ինք միղաւուր:

ՍԱՐԳԻՍ

Բաս ՚ես էլ վունչիչ էլի:

ՍԱԼՈՄԵ

Ով է ասում, ով է ասում, պարուն. լաւ գիդացի՝
էլի քու խաթը ու պատիւն է, վուր ինչըսւ էսօր
մնացիլ է բանը, թէ չէ վից ամիս վաղ կռւ վսակէի...

ՍԱՐԳԻՍ

Ճատ շնորակալ իմ էտ զադա պատուի համա,
շատ... Ամա մէ ինձ ասա, Սալօմէ, զուն խելօք
կնիկ լիս, իմ ասածը չուստ կռւ հասկանաս... Փուղ
ու բաժինք դուք չիք տալի, ախպէր, ու չունիք էլ...
բէղամաղ մէ ըլի, գէթաղվա, ու ՚ես խօմ՝ թէ Պի-
խէլիլ ու Անանու բանը զլուխ իք բերի՝ էն ՚երդնա-
լին թագաւորի զօրութինը զիդենայ, վուր մէ
գրօշն ինչ է, չէ թէ մէ զրօշ չիմ տա Պիխէլիլն՝

ամա էլ յաւկտենական մօդ չիմ թողնի վունց մէ-
կին... չիմի միխին ու վարցկը քու շնքին:
ՍԱԼ.ՕՄԷ

Ի՞նչ իս դնամիշ անում, պարուն, թէ վառդ չու-
նինք... շատ մարթ կայ վառդ ունէ, շատն էլ աղ-
նուութին:

ՍԱՐԳԻՍ

Թիգիմ, գիգիմ վուր աղնիվուրթիք իք, նես մէ-
բէդասլ քախկցի իմ, ի՞նչ անինք:

ՍԱԼ.ՕՄԷ

Հա, լաւ գիգացի, պարուն, վուր վառդ էլ ունե-
նանք, էլ Անանուս քու Միխէկիին չէի տա. նրա վը-
րայ լաւիրն էլ շատ կան:

ՍԱՐԳԻՍ

Ա!, օղորմի քու հօրը. նես վուր ասում իմ ինելօք իս,
էտ իմ ասում է... Բատ էս ստհաթիս նես վուր ձիղ
համա իմ Միխէկիի վրայ լաւը ճարիլ ըլիմ, վուր ա-
զանչաքով, պաղանտաքով ուղում ըլին ձիր Անանուն,
ի՞նչ կ'օրիք:

ՍԱԼ.ՕՄԷ

Ե՞ս Միխէկիին էլ դարսու իմ, քու արիւր, օղօնդ
քու կամքն էլ ըլի:

ՍԱՐԳԻՍ

Է՞հ, Միխէկիը վուրն է. Միխէկիի վրայ սիրուն,
Միխէկիի վրայ տիսուկ, Միխէկիի վրայ ջահիլ ու հա-
րուստ, հարուստ, վուր քախկումը մէկն էլ չկայ:

ՍԱԼ.ՕՄԷ

Էտ ովէ է:

ՍԱՐԳԻՍ, ինչնաբառական:
Հըմ... Ստեփան Գանեկիչ Բրիլիանտովի տղէն:
ՍԱԼ.ՕՄԷ, զարմացած:

Էն վուր էրէգ ձիր տանը տեսան. նրա տղէն:
ՍԱՐԳԻՍ

Հա, հէնց նա:

ՍԱԼ.ՕՄԷ, ուրախ:
Հանաք լս անում, պարուն, թէ մասիսարա իս
դցում:

ՍԱՐԳԻՍ
Հանաք մասիսարութինը վուրն է, օլինած հոքի,
(ՍԱՐՎՈՒ) էրէգ հէնց էտ բանի վրայ էի խօսում հիդը,
վուր դուն շնուրհ բերիք:

ՍԱԼ.ՕՄԷ

Հալա թէ քու Աստուծ կու սիրիս:

ՍԱՐԳԻՍ

Աստուծն էլ ու Երգինքն էլ. չիս աւտում. ինձ
մակաքալի մարթ մի գիգենա, Սալօմէ:

ՍԱԼ.ՕՄԷ

Իժում ինչի Բարբարէն վունչիչ չասաւ ինձ:

ՍԱՐԳԻՍ

Ճէր վուրդի էր Բարբարէն... նա վուր չէր տուն
էկի՛ էրէգ էւէտ կու վիրչացնէի:

ՍԱԼ.ՕՄԷ

Քու արիւր, պարուն, կիսի կէսին էլ արժանի
մնք, թէ էտ բանը կուլի:

ՍԱՐԳԻՍ

Կտումը նես թագիէր, քիզ ի՞նչ դաւի: Թէ վրայ

Էկաւ բանը իսո լաւ, թէ չէ ու ձիր հաւնած Միխելլը
խօմ էնդի է ու էնդի:

ՍԱԼՈՄԵ

Իժում ումիկ էրլստ Ստեփան Դանելլչը:

ՍԱՐԳԻՍ

Կիսկներքումը խիստ նստեցաւ, քու արիւր... իմ
տղի համա լաւ բան կուլի, կ'օսէ... մէ հիդր խօսիմ,
կ'օսէ:

ՍԱԼՈՄԵ

Հիմի իմ իմանում էն խօսկիրը, վուր ասաւ թէ՝ նև
իմ ասելուս ասի, ասում է, հիմի գուրք խօսելիք, կ'օսէ:

ՍԱՐԳԻՆՍ, էջջառութեամբ:

Ախար վուր ասում իմ...

ՍԱԼՈՄԵ

Աբա ինչ վիքը կ'օնէի... էնդուր էլ էնէնց հա-
րապատիկ արաւ:

ՍԱՐԳԻՍ

Բաս նև էլ ինչ իմ ասում ախար:

ՍԱԼՈՄԵ

Տղէն իսո, քու արիւր, էն օրը Սարբանիի բալումը
գիներուս փարսնի պէս պտուտ էր գալի. ինչ սի-
բուն ախչիկ ունիս, կ'օսէ. խոստացան էլ վուր վիզի-
տով դան միզ մօդ, ամա ջէր չին էկի:

ՍԱՐԳԻՍ

Մէ Աստուծ տայ վիրչանալ էս բանը, վիզիտով էլ
դու քան յօրէսի դէնն ու առանց վիզիտի էլ:

ՍԱԼՈՄԵ

Ինչ ասիմ, պարուն, էտ էն հանդի լաւութին
կ'օնիս միզ, վուր ինչըու մահը պարտական կուլինք:

ՍԱՐԳԻՍ

Զէ, Սալօմէ, նև սուտ սիլի բիլիք չիմ գիդի.
զուրթ է լաւութին իմ անում ձիզ, մինձ լաւութին.
ամա ուփրո մինձ լաւութին նև իմ գլխին իմ անում
իմ Միխելլին. մէ էս վորցանքեմէն ազատիմ նև
նրան:

ՍԱԼՈՄԵ

Աստուծ նրան էլ էնէնց բախտաւուրէ, վունցոր
քու սիրտը գ'ուզէ:

ՍԱՐԳԻՍ

Ախար կանդնիլ է վիշտ թէ՝ կնիկ ուզող մարթը,
ասում է, պիտի կինաց ննդիր ստուէ իր համա, չէ
թէ վուզ ու բաժինք, կ'օսէ: Աբա էս օրէնք է, քիզ
իմ հարցնում: Առանց վուզ ննդրութին կուլի աշ-
խըրքումը: Օրինակ ասինք նև վունչիչ չունիմ ու
հրամանքդ էլ վունչիչ, ինչումը կու գառնանք նըն-
գիլ... հըմ... թէսար նամազու արի էլի, վուր նրան
էն ուսումը տալ տուի, ամա էլ ինչ փայտա:

ՍԱԼՈՄԵ

~~Խիլքումդ նոտում է գանա... Քանի մարթ է խարաբ էլի նրանցմէն. ախուս չէ քի պէս տղէն, էն էլ քի պէս խելօքը, վուր նրանց ճանգումն ըլի... Եքոց Ելոր, Աստուծ մի արասցէ, ոլ գիգէ ինչ օլին էին բերի զլուխտ. միխկը չէք քու տէրը... Գնա, վուրթի, գնա Աստծուն փառք տու վուր էս միտկն էրտա քու հօրը... Իժում ինչ ախչիկ է թէ օսկով լիքը խազինա իս ճարի, թէ նրան, դիփ մէկ է, ՚ես ու իմ Աստուծը... Գնա ձեռին պահ արա, շնորակալութին արա, վուր աշխրքի փորցանքեմէն քիզ ազատում է... (Մօք է գունու:)~~ Արի, արի, վուրթի, թէնից բանք է:

ՎԱՆՈ, ԹԵՇԻ ՎԵՐԱ-ՀԵՐԱ:

Իս տու էտ մատնիքը:
ՍԱՐԳԻՍ

Վոնց թէ քիզ տամ:
ՎԱՆՈ

Իս տու, իս տու, ՚ես կնիկ մնիկ չիմ գիգի:
ՍԱՐԳԻՍ, առանչէն:

Արի ու գիլի գլխին աւետրան կարթա:
ՎԱՆՈ

Ի՞նչ իս փիքը անում, իս տու էստի, ասում իմ:
ՍԱՐԳԻՍ

Ախար, վուրթի, ինչ իս ասում. քու հօրը չիս մանչնում:

ՎԱՆՈ

Ի՞նչ անիմ, չարացած էր, մէրաշ ասաւ. մէ էրկու օրուան վրայ լիդ գու քայ:

ՍԱՐԳԻՍ

Զէ, վուրթի, չէ, չիմ կանայ տա. քու հօրն ինչ զուղաբ տամ. թէ գուն չիս վախենում նրամէն, ՚ես վախենում իմ, ախպէր:

ՎԱՆՈ

Գէթաղվա, ինչ գուղիս կու տամ:
Փալութեալ է:

ՍԱՐԳԻՍ

Զիմ կանայ, քու արիւը:
ՎԱՆՈ, գութալուուուծ:
Քու լաւութինը կու վչարիմ:

ՍԱՐԳԻՍ

Զիմ կանա, Աստուծ գիղենայ... իմ հօր գերեզ-
մանը գիղենայ չիմ կանայ:
Վ.Ա.Ն.Օ

Այ, թէ չլս կանայ...

Կաթուում է ճառանին իւշը:

ՍԱՐԳԻՍ, ճառանին բերուսն է չգում:

Է՛, ձեռը վիկալ թէ քու Աստուծ կու սիլիս... (Ա-
լուստում է:) Փիէ...

Փախչում է մզէ դանից, Վահան էպենից վա-
շում է: Վարսագոյն իջնում է:

ՍԱՐԳԻՍ

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Միքայէլի գրասենեակը, որը գարդարուած է
թէեւ համեստ, բայց նորր ճաշակի կահ-կարափով։ Աչ կողմի
գրասեղան եւ մեծ պատուհան։ իսկ մախ՝ դիւան, վառարան եւ
դուռը։ Ուր հարկն է աթուներ եւ բաղկաթուներ, Մէջտեղը եւս
դուռը, որից աշ՝ գրասեղանի դիմացը՝ գրադարան։

ՏԵՍԻԼ ԱԹԱԶԻՆ

ՄԻՔԱՅԻԼ, մեսակ, գրասեղանի հօդ պայտուակի մէջ դասու-
մում է գրտեր, հոգուստուներ և զանողան իրեշեներ։

Մնաս բարեաւ, դու, իմ հալրական տուն։ (Նոյնում
է իր շուշը։) Մնաք բարեաւ, մանկութեանս քաղցը
իշշատակներ... Այտեղ ծնուեցայ, այտեղ մեծացայ,
բայց այժմ այս ահազին տանը մի անկիւն ան-
գամ չէ մնում ինձ համար, ուր կարողանալի ազատ
շունչ առնել... «Գտըրս կ'անեմ տանից, դուրս կ'ա-
նեմ» սպառնում ես դու, հայր. ահա, ես ինքս իրա-
գործում եմ քո ցանկութիւնը... Թափառիր այժմ
սենեակից սենեակ, կանչիր, ազագակիր որքան էլ
կամենաս, սակայն իմ հետքն անգամ չես կարող
գտնել ալտեղ... (Ընէշնշում է ճպածհանուի մէջ. շո-
ւիւն։) Այս, զնալ, զնալ, կորչել ալսուեղից...
Նոյնում է գրասեղանի հօդ և շարունակում իր գործը։

ՏԵՍԻԼ Բ

ՄԻՔԱՅԵԼ, ԲԱՐԲԱՐԵ

ԲԱՐԲԱՐԵ, ներս գուշակ չափ ռահեց:
իտ ինչ իս անում, Միխել ջան:

ՄԻՔԱՅԵԼ.

Ահա, տեսնում ես, մայր... Ես արդէն ասացի քեզ
թէ իմ այստեղ մնալն այլևս անկարելի է:
ԲԱՐԲԱՐԵ

Է՛, ձեռը վիկալ, Միխել ջան, հենց ապրիս, իսո
չիս կանալ սպանի ինձ... Ախար միխել չիմ, վուր-
թի. քու զլուխը չիս խղճում, ինձ էլա խղճա է...
իտ է քու սէրը...

ՄԻՔԱՅԵԼ.

Դու ինքդ էլ լաւ գիտես, մայր, որ եթէ քո սէրը
չինէր, ես մինչեւ այսօր մի բողէ անդամ չէի մը-
նալ այստեղ:

ԲԱՐԲԱՐԵ, իւլու Միքայէլ չետական գերժը, որ նա դնում
էր պայտասակի մէջ, և չգելու սեղանի վրայ:

Արա նո բաց աչկոլ կու թողնիմ վուր դուն էտ
բանն անիս:

ՄԻՔԱՅԵԼ, վերասանելով նոյն գերժը և դնելով պայտասակը:

Ոչ, ոչ, մայր. ես արդէն վճռել եմ որ էլ այստեղ
չկենամ, և կեանքով եմ երդվում, որ ոչ մէկ բանով
ես չեմ վոխիլ իմ վճիռը...

ԲԱՐԲԱՐԵ, նստելով հօպը:

Ջուրն էկիլ է ու ինձ տարի...

ՄԻՔԱՅԵԼ,

Հայրս ինձ այս դրութեանը հասցըց:
ԲԱՐԲԱՐԵ

Քու հէրը քու բախտաւորութիւնն է ուզում մի-
թամ, վուրթի:

ՄԻՔԱՅԵԼ,

Նրա բախտաւորութիւնը փողն է...
ԲԱՐԲԱՐԵ

Է՛կ, վուրթի, ծիր մարթ է, նրա ասածն ինչ իս
այնումդ գցում:

ՄԻՔԱՅԵԼ,

Ի՞նչպէս թէ ինչ ես այնումդ գցում... Նա ուզում
է որ ես ոչ կամք ունենամ, ոչ սիրտ, ոչ խելք, ամէն
դէպքում իր խելքով շարժուիմ, իր կամքը կատարեմ...
~~(Վերջնապահութէ)~~ Ես չեմ կարող դիմանալ, մայր իմ, ես էլ
մարդ եմ... Ասուած իմ, այսպէս էլ բան. Հայրը
որդի մեծացնէ, ուսում տալ—ուե ու ովագտակը հաս-
կացնել տալ նրան, և երբ երեխան մարդ դառնայ, ա-
մէն օր այն կոխւն ու անբաւականութիւնն ունենալ
թէ ինչն մարդը նորից երեխան չէ դառնում... Կա-
թարեալ պատիժ, ճշմարիթ: Ի՞նչ է կուրօքէն չեմ
հետևում նրա խորհուրդներին, նա սպառնում է ինձ
տանից դուրս անել և բաւական չէ որ այս երեխան
է ասում, այլև երէկ դնացել է Սալօմէլ մօտ էլ
պարծեցել... Օ՛հ, նա իմ սիրտս բոլորովին թու-
նաւորել է:

Բարիցացած ման է գուշ, յետոյ վասարանի
գրայ ոչ արհնէու յենիշեմ՝ գլուխը չետակէ
մէջ տառած:

ԲԱՐԲԱՐԵ, Երկար շառավեհնից յեպոյ:

Դուն էլ վուր նրանցն աւտում իս, վուրթի, արմնում իմ քիմէն, քու արիւը... Ասած է՝ «Թցը դըրսեմէն է ճրէլ՝ մարթը նեքսեմէն»... Լաւ զիդենաս վուր նրանք չէ թէ քիզ ին ուզում, քու հօր կարողութենի վրայ ունին աշկը... Ելախտ էլ ասի, վուրթի, վուր էն օրն իր վուտով էկաւ Սալօմէն ու իր բերնով ասաւ էս բանը, քիզ կի սուտ ումիկնիր է տուի. արա աւտալու է... Ով զիդէ նրանց մտկումն էլ ինչ կայ ու քու հօրն ին սուտ մահանա բերում... (Կարձ շառավեհն): Քիզ ինչ ասիմ, Միխէլ ջան, վուր քու զիսի զաղը ջա զիզի. էն հանգի ջուղաբ իմացար նրանցմէն ու էլի նրանց վրայ իս փիքը անում, վուրթի:

ՄԻՔԱՅԵԼ,

Է՛հ, մալր իմ, մէկն ասում ես, միւսը չէ...

ԲԱՐԲԱՐԵ, գնալով դեղի Միտոյէլը:

Ախար զլուխտ խուզի հիդ հաւսըրեցիր. գնացիր դէմուգէմը խնդրեցիր ու ջուխտ ձեռով վուտիդ չփաթըթուեցան ու էն սահաթին չտուին քիզ իրանց ախչիկը, էլ նրանց էրեսին կու մտիկ անիմ, եա բարիլուս կու տամ յօրէսի դէնը... Գլուխը քարը տան, էրեսը սիւ սպատովը. դուն էլ թքէ նրանցն ու մըտիեմէտ հանէ:

Նստում է դիւնանի զըոյ:

ՄԻՔԱՅԵԼ, յօրենողով յօրը:

Մալր իմ, ես սիրում եմ Անանուն, հասկանում ես, սիրում եմ...

ԲԱՐԲԱՐԵ

Ուցնավուր իս դուն էլ, Միխէլի. ինչ անիմ վուր սիրում իս, քախկումը ախչիկը կտրուիլ է... Նրա վրայ լաւը յօրէն քու հօր ասածն է, հազիր աղանձաքով տալիս է քիզ նրա տէրը՝ էն զագա փուղ ու բաժնքով. ամա վուր քու ասածի իս, ինչ վայ տամ ՚ես իմ գլուխը:

ՄԻՔԱՅԵԼ, գրասեղանի յօր:

Մալր իմ, ի սէր Ասուուծոյ, այդ բանի մասին էլ ոչ մի խօսք:

ԲԱՐԲԱՐԵ

Բաս ինչ ասիմ, վուրթի. թէ կի հէրն ու մէրը զուգթ զաբուլ չին անի, տանեմէն խօ չիս կանայ փախցնի ախչկան:

ՄԻՔԱՅԵԼ,

Թէ աջղիկն էլ համաձայն է, ինչի չէ, լաւ...

Ման է գոյլի:

ԲԱՐԲԱՐԵ

Վույ քոռանամ ՚ես, էտ է պակաս... իտ ինչ իս ասում, Միխէլի ջան. ուզում իս աշխրքի «Ասա կ'օսէն» դուն գառնաս:

ՄԻՔԱՅԵԼ,

Այօ, գիտացիր որ այդպէս էլ կ'անեմ, եթէ այդ տեղը կը հասցնեն:

ԲԱՐԲԱՐԵ

Ու էտու համա էլ հիւանում իս ինձմէն էլի, վուրթի...

Աչերը որբում է:

ՄԻՔԱՅԵԼ, ՆՍՊԵՂԹՈՎ Տօր ՀՊՉԻՆ:

Դու հանգիստ եղիք, մայր իմ, մի օր էլ չեմ անցկացնիլ առանց քեզ տեսնելու. ես հօրիցս եմ հեռանում, և ոչ թէ քեզանից:

ԲԱՐԲԱՐԵ, ՄՊՂՆ:

Սիւցիլ էր իմ ծնելու սահաթը... Վուր մէկիդ դիմնամ, դուն մէ կուռը, քու հէրը մէկէլը...

ՄԻՔԱՅԵԼ, ԳՐԵՂԹՈՎ Տօրը:

Թէ ինձ սիրում ես, մայր իմ, մի դառնացնիք օրս... Անանուն խօսք եմ տուել, ես նրանից ձեռք չեմ վերցնիլ՝ թէ կուզ աշխարհը տակն ու վրայ լինի, իսկ նրան այստեղ բերել անհնարին է. դու էլ դիտես, որ անհնարին է՝ ոչ հայրս թոյլ կը տայ, և ոչ էլ ես կը կամենայի՝ որ այն խեղճ աղջիկը հօրս նախատինքները լսէր ամէն օր... Միակ ճանապարհը՝ գընալ, հեռանալ այս տանից... Մի՛ լար, մայր իմ, աղաչում եմ, մի լար. հայրս ինձ անիծում է, նրա անէծքի հետ գոնէ թող օրհնութիւնդ հետո տանեմ:

ԲԱՐԲԱՐԵ, ԳՐԵՂԹՈՎՆԵՂԹՈՎ Խ ՄՊՂՆ:

Ախ, Միխէիլ ջան, վուրթի ջան, քի չարի փուխ ըլի քու մէրը... Դանակով վուր կտրտիս սիրտս էն լաւ կուլի ինձ համա, կանց քու հիռանալը... (ԶԵՒ-ՔԵՐԸ ԷՄՊՐԵԿԱՆԵՂԹՈՎ) Գանդուիլ էր էն սահաթը, ինչ սահաթի նրանք միք հարեան դառան... Վուչ էիր տեսի դուն նրանցը...

ՄԻՔԱՅԵԼ, ԳՐԵՂԹՈՎՆԵՂԹՈՎ:

Օ՛հ, Աստուած, Աստուած... (ԵՓՈՒԹՈՒԹ ՏԱՆ Է ԳԻ- ՀԻՄ, ՅԱՆՀԱՐԾ ՀԱՆԳ Է ՏԱԿՈՒՄ ՊԱՊՈՒՀԱՆԻ ՊԱՊՈՒՀԱՆ Ի ԴԻ- ՖՈՒՀԱՆԻ) Հա, հա, հա... Ահա, տես, մայր իմ, տես,

դու աչքովդ տես, թէ ինչպէս հայրս ծիծաղելով դուրս է գալիս այնտեղից. հա, հա, հա... Այն մարդը, որ տարէնը մէկ անգամ չէր գնում նրանց տուն, այժմ ամենայն օր է այցելում նրանց. հա, հա, հա...

ԲԱՐԲԱՐԵ, Տօհենալով պապուհանին, յետոյ առանցին:

Ես էլ ինչ է... համ էրէգ, համ էսօր...

ՄԻՔԱՅԵԼ,

Իմ բախտաւորութեան համար աշխատողը... (ՅԱ- ՐՈՒՆԱՀՈՒՄ Է ՆԵՐՆ ԴԻԱՄԱՆՉՈՒՄ) Հա, հա, հա... Տես, տես, թէ ինչ սկրով բարեւում են միմեանց նա ու Սա- լոմէն... Օ՛, հայր իմ, դու ինձ համար հոր ես փո- րում...

ԲԱՐԲԱՐԵ

Հանգստացի, հանգստացի, գէնացվալէ, Միխէիլ ջան:

ՄԻՔԱՅԵԼ,

Հանգստացիր, հանգստացիր... Սրտիս մէջ կրակ է վառվում, իսկ սա ասում է հանգստացիր...

ԲԱՐԲԱՐԵ, ՏԱՆ Է ԳՈՂՅԻ, ՅԱՆՀԱՐԾ Տօհենում է ԱԵՂՅԱՆԻ Խ ՎԵՐՅՆԵՂԹՈՎ ՊԱՊՈՒՀԱՆ Ի ԵՎՆԵՂՅԱՆԵՐ՝ շատապով ածում է պայուսակն մէջ:

ԲԱՐԲԱՐԵ, ԵՐԴԻ ՅԵՒԹՈՎ ԽՊԵՂԹՈՎ ԳԵԼԵՒՆԻ:

Վայ իմ օրին...

ԳԱՆՈՒՄ Է ՆԱՐՈՒՄ ՊԵԿԱՆԻ ՎՐԱՅ Խ ՄՊՂՆ:

ՏԵՍԻԼ Պ

ՆՐԱՆՔ, ՍԱՐԳԻՍ

ԲԱՐԲԱՐԵ, Սարգսին, որ ճանում է թղթ ուսնից:
Է՛ս էլիր ուղում էլի...
ՍԱՐԳԻՍ

Էս ինչ խաբար է:
ԲԱՐԲԱՐԵ

Վուրթուղ տանէն արիր, էլ ինչ խաբար պիտի
ըլի:

ՍԱՐԳԻՍ, ԿԱՊԵԼՈՎ

ՈՌԵ, դաթրեցալ... (Մէժայէլը շարունակում է եր
գործը, Բարբարէն շուտ լսյ է շենուն) Աստուծ բարի
ճանապար տաց... Էս ուր իս հաղրվում, աղաղա-
զագաց... (Լառութիւն) Զէն էլ վուր չէ տալի... Տօ՛, չիս
իմանում, քիզ հիդ իմ... (Մէժայէլը դառնալով ունի
հայրը, ինչև նայում է նրան: Խորին շանութիւն) Ի՞նչ իս
լէգուր հանդը խիթում ինձ, չիս կանալ մէ ձէն
հանի...
ԲԱՐԲԱՐԵ, Սարգսին:

Էրնէկ գլուխնամ, ինչ իս նահատակում խիղճ էրե-
խիս:

ՍԱՐԳԻՍ

Բարբարէ, գուն ձէնդ...
ԲԱՐԲԱՐԵ

Քօծ իս չիմ, ՚ես էլ մէ օր պիտի ձէն հանիմ,
թէ չէ... չաղիր համով խօսիս հիդը վուր աշխարքի
դէնօ ու մասխարա չդառնանք... Աբա, ինչ կ'օսէ

խալիսը, վուր էս հանդի վուրթին չէ կանացի քի մօդ
դիմնա:

ՍԱՐԳԻՍ, ԳԱԿԱՂՐԴՅ
Տօ՛, ձեռը չիս վիկալնի ինձմէն:
ԲԱՐԲԱՐԵ

Մէ խիստ բղաւի վրէս, շատ այնումս գալիս է.
Հիմի գուղիս գլուխս էլ ջարթէ, ՚եփոր ՚ես էս օրին
արժանի էլայ:

ՍԱՐԳԻՍ, ՎԵՐԵԿԱՂՐԴՅ
՚Ես քիզ ասում իմ, Բարբարէ, դինջ կաց, թէ չէ
հանաքը չանաք կու դառնայ, ու տեսնիմ թէ ով է
օտկում քիզ:

ՄԻՔԱՅԵԼ, ՏԵՐԵԿԱՂՐԴՅ
Տեսնում ես, մայր, որ որա համար էլ ոչինչ չկայ՝
ոչ որդի և ոչ կին. էլ մի խօսիր հետը, խնզրեմ:
ԲԱՐԲԱՐԵ, վէր է հէնում և փաթուլիւնը Մէժայէլին:

Մի գնա, մի գնա, Միխէլի ջան: (Սարգսը այդ մէ-
ջային հօպէնում է պայտասահին և, չեւուելին ու գլուխը շար-
ծելով՝ անբառականութիւն արդայացուն): Զարդ տանիմ, մի
գնա...

ՄԻՔԱՅԵԼ,
Աստուծ սիրես, մայր իմ, դրա մասին էլ չխօ-
սենք:

ԲԱՐԲԱՐԵ, ՀԱՂՐԴՅ
Ախ, Միխէլի ջան, քիմէն էտ ումիկը չունէի.
Չիս, Վիխէլի ջան, քիմէն էտ ումիկը չունէի.
Հիմի, վուրթի, ինչ գուղիս արա. ամա լաւ գի-
զնամ հիմի, վուրթի, ինչ գուղիս արա. ամա լաւ... (Գնաղրդյ) Վայ իս
զաղբելուն յօրէսի դէնը...
Լալով դուրս է գնում յակի ուսնից:

ՏԵՍԻԼ Դ

ՄԻՔԱՅԵԼ, ՍԱՐԳԻՍ

ՄԻՔԱՅԵԼ, շուտրուած, ասանցին:

Ախ, Աստուած, այս ինչ օր է...

ՍԱՐԳԻՍ, պայտառակի հօդ, ասանցին:

Արի ու վուրթի մինձացու... (Միտոյելին, հօտէնողավ) Տօ, հիմի էլ ջուղաբ չփա տա. ախար էս ուր իս հաւդըքում:

ՄԻՔԱՅԵԼ, գնում է ունողի գրասեղանը:

Ի՞նչ հարկաւոր է ձեզ իմանալ. բաւական է որ ձեր ցանկութիւնը կատարում եմ և չեմ սպասում որ ձեր ձեռքով դուրս ածէք այս իրեղէնները:

ՍԱՐԳԻՍ, նառելով ունտանի վրայ:

Վունցոր դարսիլ իս, ցիդ իր տիղը դարսէ ու բէսար նամազուլ մի անի, թէ չէ դուն ինձ ջէր լաւ չիս ճանչնում:

ՄԻՔԱՅԵԼ

Արդէն ուշ է, հայր, այլես ոչինչ չի օդնիլ... Այժմ գնացէք ամէն տեղ աւելի լաւ պարծեցէք, թէ ինձ տանիցը նրա համար դուրս արիք, որ ես Անանուն ուղեցի:

ՍԱՐԳԻՍ, հեգնօրէն:

Ուղեցիր, ուղեցիր... Փռանզատնու հանգը ժաժ-իս էկի՝ գէմուղէմը խօսիլ իս. վայ մօցիքլերու միխկը յօրէսի դէնը... Հալլաթտա վուր ուղեցիր... Էրեում է էնդու համա իս հաղրպում վուր գնաս քու աներանց տանը կենաս... Աշխղքումը շատ տնիկնայ

կալ, մէ տնիկնայ էլ դուն կուլիս... (Ծիծաղում է) Հա, հա, հա...

ՄԻՔԱՅԵԼ

Բաւական է, բաւական, հայր. իմ գլուխը ծաղրելու չէ, որ ծաղրում էք... Ամանի մէջ ալնքան կածեն, ինչքան կարող է տանել, աւելին ավներից կը թափուի. իսկ իմ սիրտը պլնկէպլունկ դառնութեամբ լցրել էք... Ի՞նչ է ձեր միտքը, հայր, ինչ դուք չէ, երկնքից որ հրեշտակ վայր իշնի՛ դարձեալ չէ կարող ինձ Անանուց հեռացնել:

ՍԱՐԳԻՍ

Ես էլ կու տեսնինք:

ՄԻՔԱՅԵԼ

Կը տեսնենք, կը տեսնենք:

ՍԱՐԳԻՍ

Կամաց պարծենաս:

ՄԻՔԱՅԵԼ

Կամաց պարծենալը ձեզ կը վայելէ, հայր. ես բարձր եմ խօսում և ոչ ոքից չեմ վախենում:

ՍԱՐԳԻՍ

Ինձմէն էլ չփա վախենում:

ՄԻՔԱՅԵԼ

Դուք ինքներդ կտրեցիք ձեր ահը իմ սրտից:

Մօւնում է պայտառին:

ՍԱՐԳԻՍ, ՊԵՐԵԽՆՈՂԱՎ

Փառք Քիզ, Աստուած, վուր էս օրին էլ հասցըիր ինձ... Մարթ ամագ անէ, աշխատանք քաշէ վուրթի մինձացնէ ու վիրը էստունք լուէ... Տօ, ոարթի, ինձ ինչ իս միզ դնում, մէ առա. աչկիրդ քուաղ, ինձ ինչ իս միզ դնում, մէ առա. աչկիրդ քու-

ուացիլ է, միտոկդ մթնիլ է ու քու լաւն ու վաղը չիս տեսնում, հստումը՝ 'ես ի՞նչ միդ ունիմ... Դուն ուզում իս վուրք աղանջաք անիմ քիզ, թէ Ստեփան Դանէլիչի ախչէկան թող ու գնա Անանուն ուղի՞, վուր չիմ կանալ, թէկուզ վուտեմէս քաշ արա՛ չիմ կանալ... Դուն քու հանգն իս ժաժ զալի, 'ես էլ իմ հանգը. հիմի ուզում իս՝ 'ես էլ քու աչկով մտիկ անիմ ու քու խիլքով ման զամ. վուր չի ըլի, սուտ չէ:

ՄԻՔԱՅԵԼ

'Ես ինքս հաստատ դիտեմ, որ ոչ դուք կարող էք իմ խելքով ման դալ և ոչ էլ ես ձեր խելքով, բայց դուք աշխատում էք քանդել իմ բախտաւորութիւնը:
ՍԱՐԳԻՍ

'Ե՞ս իմ քանդում քու բախտաւորութիւնը, 'ես:
ՄԻՔԱՅԵԼ

Այս, դուք, դուք հալր... Ի՞նչեր էլք ասում այժմ Սալօմէին, ի՞նչեր աւելացրիք երէկուան ձեր ասածներին:

ՍԱՐԳԻՍ, ԿՐԵՇ ՆԱՊՈՒՏ

Քիզ ի՞նչ, քիզ ի՞նչ դաւի. ինձ համա իս մէդիատօր չին ջոգի քիզ. քիզ ի՞նչ, ինչոր ասում էլ... Իմ հարցմունքին իիստ իս ջուզաբ տալի, վուր քու հարցմունքին 'ես ջուզաբ տամ... Դուն բարզդ դարսում իս դարսէ, ախպէր, էլ ինձմէն ի՞նչ իս ուզում, էլ իս նես քու հէր չիմ, էլ իս զուն քու գլուխը վուրթի չիս համարում իմը, մինք միր հախ ու հէսաբը սրծանք... Բէսար արի՝ մէ բան ասիր... Գնա հիմի ի՞նչ քէփդ ուզէ, էն արա, էլ հէր ու վուրթութիւնը մօղա չէ յօրէսի դէնը... Գնա քու ճանփէն,

Աստուծ ձեռք տալ, տեսնիմ առանց ինձ վճռնց իս եօլա գնում. ախար վիրը կու էրևալ էլի... Գնա, ախպէր, գնա, դուն քու ճանփէն գնա, 'ես իմ ճանփէն:

ՄԻՔԱՅԵԼ

Բայց դուք ձեր ճանապարհով չէք բաւականանում, հալր, այլև իմ ճանապարհի վրայ էլ քար էք ձգում...

ՍԱՐԳԻՍ, ՃԱՎՐԱՆ բէհուն նայուտմ է և երիւն չետուն չէն չեռիւն ՄԻՔԱՅԵԼ:

Վայ քու տիրուչ միխկը, վուր աշխրքի ափալը չէր չփս իմանում... 'Ես իմ քար զցում քու ճանփին... (Լուս շարժում է գլութիւնը) Յօն ինչով չփմացար վար ամէն մարթ իր խերն է պառ ում. Նրանք հէստի տղի ին տալի Անանուն վուր նրա վուտի պմիզն էլ չափսի... ին տալի Անանուն վուր նրա վուտի պմիզն էլ չափսի... (Միքայէլը ապշած նայուտմ է հօր երեսնին:) Խնչկի հիմի (Միքայէլը ապշած նայուտմ է հօր երեսնին:) Խնչկի հիմի էլ շատ լաւն էլր նրանց համա. ամա կուլի դուն էլ շատ լաւն էլր նրանց համա. ամա հիմի էլ վունչիւն... Զիս զիդի վուր լաւի վրայ լաւը ուվիր լաւ է... Վուր զիդը կուլի վուր ձեռին ակն ունենայ, ակը զէն զցէ ու արա տիզ անմիզ կէնձի վիկալնէ... (Նրէար լուս-լիւննէ:) Ի՞նչ իս մտիկ անում, վիկալնէ... (Նրէար լուս-լիւննէ:) Ի՞նչ իս մտիկ անում, զնա մտկեմէտ հանէ, էլ Անանի չկայ քիզ համա, Անանիդ ուրիշի վրայ է նշնած:

ՄԻՔԱՅԵԼ

Ուրիշի վրայ նշնած... Անանին... (Ծիծաղուտմ է:) Հան, հան, հան...

ՍԱՐԳԻՍ

Ծիծաղին, ծիծաղին, չիս աւտում միթամ. աչկով վուր տեսնիս էնչախը իս կու աւտաս:

ՄԻՔԱՅԵԼ

Գուշք ու Սալօմէն շատ բաներ կարող էք հնարել,
միայն ես խորհուրդ կը տայի՝ հանգիստ մնայիք ձեզ
համար:

ՍՍ.ՐԳԻՍ

Էտ խրատը վուր քու գլխի համա պահիս ուփրօ
լաւ կուլի, էնդուր վուր, ՚ես քիզ ասում իմ, Անա-
նին նշանած է, ու թէ գուզիս իմանաս թէ քիզ վր-
րայ լաւն ով լուս ննդաւ նրանց համա, էն հար-
ցրու... ~~Ճատ հարկաւուր է նրանցը քու դիրն ու~~
~~դալամը...~~ Ի՞նչով չխացար, վուր հիմիկուան ժամա-
նակը ինչոր վուր է վուզն ու հարստութինն է...

Վու մտկիրը դուն զնա ուրիշ տիղ քարողէ, նրանք
իրանց ախչիկը իվան Ստեփանիչին տուին:

ՄԻՔԱՅԵԼ

Իվան Ստեփանիչ...

ՍՍ.ՐԳԻՍ

Հա, Իվան Ստեփանիչ... Ովոր քիզ ախչիկ է տալի
ու դուն չլս ուզում, հէնց նրա տղէն:

ՄԻՔԱՅԵԼ

Այն թեթևամիտը... (Ծիծաղում է) Հա, հա, հա...
Սուտ է, սուտ, երբէք չեմ կարող հաւատալ:

ՍՍ.ՐԳԻՍ

Սուտը դուն իս վուր վունց անդճներուտ իս
աւտում, վունց հօրդ. մնացածն էլ քու աչկով
կու տեսնիս էլի... Տանու բարեկամ իս ախար, քիզ
էլ կու կանչին նշանտէքումը. առանց քիզ վունց
կուլի...

ՄԻՔԱՅԵԼ

Այժմ եմ հասկանում ձեր նրանց մօտ գնալ գա-
լու պատճառը, այժմ եմ հասկանում թէ ինչ խոր-
հուրդներ կ'ունենայիք դուք ու Սալօմէն... Ճաւ
պաշտօն էք յանձն առել, հայր, շնորհաւորում եմ...
Այս ըոպէիս որ ուրախ-ուրախ ճանապարհ դրեց ձեզ
Սալօմէն, երեխ այդ ձեր նոր աշխատութեան վար-
ձատրութիւնը կը լինէր... Օ՛, հայր, երջանիկ էք,
որ ծնողի անուն էք կրում, ոչինչ չեմ կարող անել...
որդիիդ եմ... Որդին... Ի՞նչ որդի, փող, փող և միայն
փող. ձեր Աստուածը նա է, նրան պէտք է պաշտէք
ձեր բոլոր կեանքում... Բայց լաւ գիտացէք, հայր, որ
ես ձեր ծախած ու գնած ապրանքը չեմ, որ ինչպէս
կամենաք այնպէս վարուէք հետա... Գնացէք, նստեցէք
Սալօմէլ հետ, դարսեցէք, շինեցէք, քարէ պարիսպ-
ներ բարձրացրէք, միայն իմացած կացէք որ զուր
է ձեր աշխատանքը. Անանին իմն է լինելու թէ-
կուզ տասը Սալօմէ գուրս գայ դժոխքի խորքից:
Գլխարկը չետային դուրս է գնում մեջ դունից:

ՏԵՍԻԼ Ե

ՍԱՐԳԻՍ, Թենակ, երիար շառաւեհանից յերայ հեգնօրին յածը
ծիծաղում է:

Հա, հա, հա... Մուլափ, մուլափ, Միխէիլ... Զը-
դան պէս դամբումը բոնուիլ իս ու չէր իիստ իս
փրփրտում, ամա վիրը վուրդի վուր նիդ քունչն է,
էնդի կուչ զու քաս... Ճատ տրտինգնիր կ'օնիս չէր

էլի, ամա վիրչը իմ քէլի մարթ կու դառնաս, մի
վախենա... (Մօդէնտըն պայտառին):) Էստունք էլ վուր
աղաւարի գարնիլ է. մէբաշ եաքա տուն չըունիս
քիզ համա... Իմ ամագն ու աշխատանքն էստու
համա էր... (Պայտառին շուա է առը և քէր ածուա
մէջ է երեւնութը:) Խսէնց վուրթի կուլի վուր իմ սէլլի
չէ հասկանում... Տէր Աստուծ, էս ինչ ժամանակի
ինք հանդիրի... (Ընկըմըն է մատանքի մէջ:) Փիս
ժաժ էլայ միթամ... Ի՞նչի... Դժաւի շուարքը վուր
դաշլա է անում իմքնին, ծառը տակուեմէն հանում
ին ու դէն ին գցում... Խօսկիրը ինչ զօրութին ունէ
քիզ համա... վունչիչ... դարդակ քամի... ան,
(Փշում է:) փփնւ... փչեցիր, դնաց ու տիզը վուն-
չիչ չմնաց... Քիզ գուրծք էր հարկաւուր, Միինէիլ,
գուրծք, էն հանդի գուրծք, վուր անդնով իմացիլ էիր
ու աշկով տեսիլ... Ին գուրծքը նև մօզօնեցի, դար-
~~սեցի ու տիզը հասցրի.~~ Հիմի ինչ ձեռնեմէտ դայ,
էն արա... Ել Անսանի չկայ քիզ համա, դնաց, ջըն-
ջուեցաւ յաւիտենական... Գնա դադուի, էրուի, խոր-
վուի, վուր խիլքդ հասնի ու աշխարքը ճանչնենաս...
Տեսնիմ իժում դուն իս քու գրերով ումիրօ խելօքը,
թէ նև իմ փողոցի խիլքով:

Դուրս է գնուա չափ դանիչ. Նարուդոյն իշ-
նում է:

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Երկրորդ արարուածի Սուրանենց տաճ սենեակը մինւնոյն զարդա-
րանքով, Գիշեր է, Աջ կողմի սեղանի վրայ դրած է վառ լապ-
տեր, իսկ ձափի վրայ՝ հանդած մու, լոցկատուի եւ նոյն զիրքն
ու զամբիւղը:

ՏԵՍԻԼ ԱԹԱԶԻԿ

ՍԱԼՈՄԵ, ԵՍԴՈՐ ՍԻՄՈՆԻՉ

ՍԱԼՈՄԵ, ուրախութան դուրս գուշն աշ դանիչ, հապանեն
չեացուած:

Վաւնց է, վունց, իմ ասածը:
ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, հագնուած ինչպէս երիրու արարուածի
ակը բու, Ական բաժանէլ չեացուած է Սուշմեն:
Ազկերուս չիմ աւտում, Աստուծ զիլենայ, Սալօմէ:

ՍԱԼՈՄԵ

Հիմի էլ կ'օսիս վուր խիլք չունիմ:
ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, նորեշն գիւտնի Աբոյ:

Ճնուքով իս, շնուքով, Սալօմէ:

ՍԱԼՈՄԵ

Բաս չէ ու քի պէս անշնուք կուլիմ... Եարաբ ինչ
կուլէր քու չարէն վուր նև չէի ուաստ էկի քիզ:
ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻՉ, բաժանէլ իսունեշն ու ժղոաշն:
Էգէբա քի վրայ լաւին էի ուաստ գալի, Սալօմէ:

ՍԱԼՈՄԵ, ՔՐՔԻՌԵԼՌԵ:

Վհնաց կուլէր քու բանը. մէ էրկուսն էլ կան
ինձպէս ախչկեղք, (Ազ յետէլ շործելով) դանա չիմ
գիղի:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ, Ճիծաղում է:

Հա, հա, հա...

ՍԱԼՈՄԵ, Տօռենալով լաղութին՝ զննում է մադանին:

Մէ մտիկ, մէ մտիկ, Եագօր ջան, ինչ ջուր ունէ.
վրէն էւէտ էրկում է վուր տէրն էլ իրապէս ասլզադա
է... (Ծալւելով) «Տուտուց կնիկ իս ու, մազիրդ էր-
դէն ունիս ու, Աստուծածնին նիզայնում իս ու...»
տիս վուր ինձ աւելի է աւտում Աստուծածնը, վուր
էհամ նրա գորութենին:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ, ԽԵՂՈՎ ԱԿՅԱ:

Աւտաս ինչիր իս խոստացի, Աալօմէ:

ՍԱԼՈՄԵ

Ին ՚ես գիղիմ... Քանի ջէր իմ փորցի՝ նրա փեշը
վուր դայիմ բռնիլ իմ, իմ սրտի ուղածը դիփ կա-
տարիլ է... Աւտացած էի վուր էս բանն էլ պիտի
էսէնց ըլի:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ

Մէ քիչ կի միրտդ դնաց ու էկաւ վուր էս բանը
մէ քիչ ուշացաւ. կինազամ ումիկդ կտրկում էր:

ՍԱԼՈՄԵ, ՆԱՓԵԼՈՎ ԴԵՅՄԱՌԵԿՄ ԲՊԱՀԱՄՈՒՄ Քրայ:

Քու արիւր, Եագօր, հանց քուր ու ախպէր վիղի-
տով էկան էսօր՝ միրտս խամբջամացաւ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ

Հա, հիմի էտէնց կ'օսիս. էրէգուան դէսը կի տասը
չէր քուչի դուռը դուս զազեցար:

ՍԱԼՈՄԵ

Ո՞վ էր էլի իմ մազիար վուր սիրտն էնէնց չէր
շուռ էկի վունցոր իմը. մնալու պէս դժար վունչիչ
չկայ... Դուն էն քօփակին ասա թէ մատնիքը չի-
բռումդ ունիս, էլ ինչ իս ուշանում, արի է:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ

Կ'հ, հէր օխնած, էգէրա ինչ հարկաւուր բան
ունէր:

ՍԱԼՈՄԵ

Կատու վրայ էլ հարկաւուր բան վուրը կուլէր.
աչկիրս ջուր դառաւ նրա մնալէն:

ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ

Էղէրա...

Ականջում չչփչում է:

ՍԱԼՈՄԵ

Կ'հ, լաւ է, քա, ինչ ասիս դուն կու մօգօնիս:
ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ, Ճիծաղում է:

Հա, հա, հա...

ՍԱԼՈՄԵ, Նորից զննելով մադանին:
Աւտաս հարուր թուման աւել աժենայ, Եագօր ջան:
ԵԱԳՈՐ ՍԻՄՕՆԻԶ, առանջուղ մադանին ու զննելով:

Բաս չի աժենայ. անտիկա իմքին է:

Մադանին յետ է առաջի և գնում աշ ան-
հետից ծիրանբնձը մերյարեմ:

ՍԱԼՈՄԵ

Ջէր անմիդ բէլզէն վուր էս է, դուն մէկէնիրը
հէսար արա թէ ինչ կուլի... (Չափ կոշի ուշանից
շայիտառութէ զերցնելով) Գնա ու գնա, Անանի, բախ-
տաւուր աստղի իս ծնած. զուքած վուր դուս դաս,

աւտաս հինգ հազար թումնի մենակ ակնեղին ըլի
վրէտ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ, ծիսմորճը պատրաստելով:

Թիփ լաւ, Սալօմէ, ամա (Գյուղիը շորժելով): չիմ
զիդի թէ Անանուն վունց պիտի կոտրիս...
ՍՈԼՈՄԵ, վախենալով նայում է չափ որոնց, որը ծածկած է:
Էտ նես զիդիմ, դուն բան չունիս:

Ծիսմորճը վահառամ է:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ, ծիւելով:

Գիգիմ, զիդիմ, իմ ասելուն նես ասիլ իմ, միխկն
ու վարցկը քու շնչին, Սալօմէ:

ՍՈԼՈՄԵ, Աւակայած առաջ բերելով նրան:

Ամէն իմ միխկը Աստծու մօտ էս ըլի:
ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ

Ախ, Միխէիլ, քու հօրն ինչ ասիմ:

ՍՈԼՈՄԵ, շուշիտուիլ Առշնելով աջ հողմ սէշանի կրայ:

Աբա Միխէիլի հատն ու կտուրն է, Եագօր. ինչ
իս ասում, մէ քիչ Աստծու ունեցի է:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ, յօները հիտելով:

Լաւ է, լաւ, քու հօրն օղորմի. ինչ էլաւ, էլաւ:

Թևակայած գնում էն չափ իշշմ:

ՍՈԼՈՄԵ

Բահան, սլրծաւ գնաց. վարսալամ, վարքալամ. էլ
ինչ նուր չար, նուր բարի:

**ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ, նստում է Անանու ալուսի վրայ. ինչ
Սալօմէն աջ արմէիով յէնկրում է նրա չափ ուսին:**

Աստծու տայ, Սալօմէ, վիրչը չիոշիվնինք ու ու-
րախանալու մագիար սրտեներուս չգառնացնինք.

օրինակնիր ասում ին շատ է էլի՝ վուր սրտի ընդէմ
մարթու տուած ախջիկը էրդար օր չի ունենա:

ՍԱԼՈՄԵ

Էտ օրինակնիրը տուտուց մարթկերանց ասած թէ
կուլի ու գուն էլ աւտում իս... Նշնելու ախչկայ
սիրտն ով է հարցնում. Կրանք ինչ զիդին վուրն է
իրանց համա լաւը, վուրը վաղը... Ինձ վուր նշնում
էին, գնւն հէնց զիդիս իսիտ էի հաւնում քի զ. ամա
շարէս ինչ էր (Եագօր Միհնիւը Գյուղի ամբամբայնուն
ու ծպառչուն իսրը նայում է Սալօմէն): Իմ հէրն ու մէրը
վիէս չաքուչի պիս կանգնած էին... Իժում իմացայ
վուր վաղ մին ուզեցի ինձ համա. Աստուձ հոքենե-
րուն լուսաւուրէ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ

Համա, վիառք Աստծու:

Արյունելով ծիկ գնուակ, ծիսմորճը նայ է
դնուամ սէնեակի անշինում և վերյունում
պաշտօնական Անուպը:

ՍԱԼՈՄԵ

Բաս ինչ զիդէիր. նես քիզ ասում իմ վուր կսիկ-
արմտի բանը քու բան չէ:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ, Առարը Գյուլով աւոն:

Ես ձեռս լուացիլ իմ, Սալօմէ. կնդղերանց բա-
նումը չիմ իստոնվում... (Գյուղի Անուպիւն) Ես գնում
իմ կլուբը, էս զիշիր ուշ կու տուն դամ:

ՍԱԼՈՄԵ

Խիստ լաւ էլ կ'օնիս:

ԵԱԳՈՐ ՍԻՄՈՆԻԶ, Թջէ որո՞ւ:

Է՛ի:

ԱՍԼՈՄԵ, ԹԻՒՆԵՐԻՆ:

Կիրնեկ կուլէր կնդերանցը վուր քու աբով էին
մնացիր... (Հասնելով Նոտօր Սիհօնիչին:) 'Ես կու օտելիմ:
Դուրս էն գնում:

ՏԵՍԻԼ Բ

ԱՆԱՆԻ, ՋԵՆԻ. ան հագուստով և սպիտուի ժողովի վերաբ-
իւտով դուրս է գույն չոխ դաշնից, ծանր ժայշերով գնում
նոյն իոշմ պատրահանց բայց անում և դուրս նայում:

Զիայ, չէ երևում... (Պատրահանց ժահում է:) Աչքերս
ջուր կտրուեց ամբողջ օր նրա ճանապարհը պահելով,
իսկ նա դեռ ևս չէ զայլի... Երբէք այսպէս չեմ ցան-
կացել նրան տեսնել, ինչպէս այժմ, երբէք սիրտս
այսպէս չէ լցուել, ինչպէս այժմ... Օ՛հ, որքան բան
ունիմ նրան պատմելու: (Չափ սեղանի վրայ սրճնում է
շուշիտուիլ և գնում վերցնում աշ սեղանից:) Ա՛խ, Մի-
քայէլ, Միքայէլ, եթէ այս էր վերջը, եթէ այսքան
արգելքներ պիտի ծագէին մեր միանալու դէմ, ինչի
ասացիր ինձ այն քաղցր խօսքերը, ինչի խոստացար
ինձ քո սէրը, ինչի խլեցիր ինձանից իմ հանդառու-
թիւնը... Ապրում էի ինձ համար անհոգ, քեզ տես-
նելով ուրախանում, քեզ հետ խօսելիս բաւականու-
թիւն ստանում, բայց քո բացակայութիւնը երբէք
ինձ վիշտ չէր պատճառում... Այժմ... այժմ ինչ
արիր դու ինձ, այս ինչ կրակ զցեցիր սրտիս մէջ,
որ առանց քեզ, առանց քեզ վրայ մտածելու, ա-
ռանց քո անունն լիշելու շունչ չեմ կարողանում

քաշել... (Լուսելին:) Ա՛խ, Աստուած, միթէ մէկ ըովէ
նրա համար միայն ուրախացրիր ինձ, որ յետոյ ալս-
պիսի տանջանքներ կրեմ... Ի՞նչ ճար կայ իմ խեղճ
դլիսին... (Վասում է չոխ իոշմ սեղանի վրայ դրած նամը,
առաջ և նսպամ, չետագործը վերցնում, զնում և աւազ պահ-
բերում գյուղաց վերցնում է գիրքը և մի ժամի վայրէնան
իմրեւում:) Խեղճ աղջիկ, դու էլ ինձպէս տանջվում
ես. հասկանում եմ քեզ, հասկականում, բայց ոչ ոք
օկնող չկայ մեզ... (Դարձեալ մի ժամի վայրէնան իմրեւում
է. յւեռ ծալէլով գիրքը:) Կարդալու սիրտ ևս չկայ...
(Գնում է դաշնամուրի առաջ նսպամ և նուագելով երգում
է մի պիսուր եղանակ. Բայց շրաբով չարում է երգը և աչերը
սրբելով մէր է ինուում:) Էլ չեմ կարող, կարծես թէ խեղճ-
պում... (Նորից նայում է պատճառանից:) Զէկաւ:
վում եմ...

ՏԵՍԻԼ Գ

ԱՆԱՆԻ, ԱՍԼՈՄԵ

ԱՍԼՈՄԵ, Տրնում է թջէ դաշնից:
Ի՞նչի իս փաթըթուի, մըսում իս:
ԱՆԱՆԻ
Այն, լաւ չեմ դզում ինձ:
ԱՍԼՈՄԵ
Հիւանդ իս չիս: (Չերքը բանում է:) Էս ինչ է,
տաքութիւն ունիս:
ԱՆԱՆԻ

Կարելի է:

ՍԱԼՈՄԵ

Հաջաթ չէ, կու անցկենալ:

ԱՆԱՆԻ

Ասմա, ինդրեմէ մալը լիմ, այս ի՞նչ է անցնում ակտեղ. ինձանից ծածուկ հաւաքվում, փակում, խօսում էք... Որքան էլ մտածում եմ, մտածում, ոչինչ չեմ կարողանում հասկանալ:

ՍԱԼՈՄԵ

Նստի էստի, վուրթի, նստի... (Նստամ էն՝ Սալշէն դեռանի կրայ, Անանին՝ հօպը բազէտլուսի կրայ:) Զարթնի քիզ ի՞նչ ունինք խօսելու. միր ուրախութինն էլ գուն իս, միր դարդն էլ, միր ասելուն էլ, միր լսելուն էլ... Քիզ նշնում իմ, Անանի ջան:

ԱՆԱՆԻ, ուրախ:

Ուրեմն Միքայէլի հալը համաձայնվում է:
ՍԱԼՈՄԵ

Միխէլը վուրն է... չէստի բան ուրախացնիմ քիզ, Անանի ջան, վուր Միխէլին էլ մտէդ զցիս ու ի՞նձ էլ... Ստեփան Գանէլիչն ուզում է քիզ իր վուրթու համա... (Լոռութեան:) Ի՞նչ իս արմնում, դուրթ իմ ասում, քու արիւր...

ԱՆԱՆԻ

Ես քեզ չեմ հասկանում, մալը իմ:
ՍԱԼՈՄԵ

Վուրն թէ չիս հասկանում... (Գրպանից հանում է հապանին:) Այ, էս էլ բէլիէն. էս սահաթլա էկաւ... Գնա ու գնա, տասը մատիդ մում վառէ ու Աստծոն էնէնց վառք տու, վոր էս հանդի բախտի է քիզ ռաստ բերում. էրազումտ էլ չէիր կանայ տեսնի...

ԱՆԱՆԻ

Գու հանաք ես անում, մալը իմ:

ՍԱԼՈՄԵ

Հանաքը վուրն է, քա. քու արիւր սուտ օրթում կուտիմ... Խսօր հանց էսղանց գնացիլ է տուն խիղճ տղէն, հօր առջիւր չոքիլ է ու հէնղադա աղանչաք է արի, ինչըի նա էլ մատեմէն էս մատնիքը հանիլ է առդի կուրդիլ է... Ախար աշքարա տեսնում էի վուր իսկիքի ծէրը գնում էր էն տղինը քիզ հիդ խօսելիս. Ավագանուիլէ նրա կոտր բիկելուն, ցուղրուամէլա իքմին է:

ԱՆԱՆԻ, վերէնալով:

Ի՞նչիք ես պատմում, մալը իմ. ես գեռ ես ականջներիս չեմ հաւատում:

ՍԱԼՈՄԵ

Վուրն թէ չիս ստում, թուրքերէն խօ չիմ խօսում ու լեզզերէն. Ստեփան Գանէլիչի տղէն ուզում է քիզ, ասում իմ, ուրիշ էլ ի՞նչ աւտալ գուզիս...
ԱՆԱՆԻ

Բայց Միքայէլը, Միքայէլը, մալը իմ. նրա մէկ մազը չեմ վոխիլ տառը Ստեփան Գանէլիչի որդու հետ: Գուտամ է ունուի յան:

ՍԱԼՈՄԵ, հէտեւը:

Այ, անխիլ իս ու անխիլ էլ խօսում իս. արա նրանց մօդ ի՞նչ լիշելու է Միխէլը:

ԱՆԱՆԻ

Ի՞նչպէս... Մինչև այսօր Միքայէլի նմանը ոչ ոք կար քեզ համար, իսկ այժմ նրան լիշելն անգամ շարթէ:

ԱՅԼՈՒԹԵ

Ի՞նչ կու վիքը անէինք թէ Աստուծ Ստեփան Գանձիքի տղին ռաստ կու րերէ վիքը. նրա բանն ուրիշ է, նրա բանն ուրիշ:

ԱՆԱՆԻ

Այդպէս է հա... Օր չեր անցնիլ որ Միքայէլի Համար չասէիք՝ «լաւ տղայ է, առում առած է, լսելոք է, աղնիւ սիրու ունի, նրա նմանը ոչ ոք չկայ քաղաքում, երանի կը լինի քեզ ուղէ...» և այժմ նրա բանն ուրիշ է. այժմ, որ սիրոս էլ, միտքս էլ նրան եմ տուել... Իմ սիրուը քո հաղուստների պահարանը չէ, մայր, որ ինչ տեսակ հաղուստ կամենատ, այն պահես մէջը:

ԱԿԱԿՈՎՏ Է ՊԵ ՀԱՂԻ:

ԱՅԼՈՒԹԵ

Ֆա՛լպակաս, ծա՛լպակաս մի խօսի... իժում ով ասաւ վուր Միխէիլն ուզում է քիզ:

ԱՆԱՆԻ

Պարզուած չէ միթէ. նրա առաջարկութիւնն արդէն յախնի է՝ նա սիրում է ինձ, և... և էլ նրան:

ԱՅԼՈՒԹԵ, ՀՅՈՒՆԱՄՅԻ:

Երկուսդ մէտի ձկը ուր ուր վիկալէք, գալիմ ծալեցէք ու սրտի մաղիար ջիբեներումդ պահեցէք. հաստատ զիգացի վուր էլ նա չի կանայ ուզի քիզ:

ԱՆԱՆԻ

Ի՞նչի:

ԱՅԼՈՒԹԵ

Ինդուր վուր նրա հերը չէ ուզում... Քանի ասիմ քիզ:

ԱՆԱՆԻ

Նա իր հօր լսելքով չէ մանգալի:
ԱՅԼՈՒԹԵ

Ի՞նչ է ասում, քա. բարէմց էրկուսդ մէտի գնացէք ու թաքուն փակուեցէք էլի ու աշխրքի մասխարա զառէք:

ԱՆԱՆԻ

Հաւատացած կացէք, մայր իմ, որ բացի Միքայէլից ես ուրիշ ոչ ոքի չեմ ուզիլ:

Գնում է չափ հաշմ:

ԱՅԼՈՒԹԵ, ՀԵԿԵԿԵՂԻ:

Քու քէփի ով է թողնում քիզ, էրնէկ զիգենամ. ինչ զիգին զուն քու լաւն ու վաղը... Գուն ինձ վրայ շատ իս հասկանում. քու տոլ իսիլք դնդներումս էլ ունիմ:

ԱՆԱՆԻ

Այն, այն, մայր իմ, ի հարկ է զուք աւելի էք հասկանում. բայց թողէք այդ, ուրիշ բան խօսենք խնդրեմ:

ԱՅԼՈՒԹԵ

Ի՞նչ է ասում, քա. ուրիշ ինչ պիտի խօսիմ, ինչ ունիմ խօսելու. ասիմ վար արեգագը առուտէհան դուս է զալի, իրիզնութին մէր է մտնում. ինչ կայ, կայ ու ինչոր հիմի ասում իմ՝ պիտի ըլի:

ԱՆԱՆԻ

Անկարելի է, մայր իմ, անկարելի:

ԱՅԼՈՒԹԵ

Կարած էլ է ու ձւած էլ:

142

ԱՆԱՆԻ

Այս, Ասուած:

ՍԱԼՈՄԵ

Աստուձ քու բանը շինիլ էլ է ու պրծիլ էլ. ամէն սահաթի քիզ համա պարապ չէ: Ի՞նչ դիդիս՝ քանի խէջ ու սուրփի իմ մէջ զցի... (Մօդէնալով) Բոնէ գուն էս մատնիքը. տիս ինչ լաւն է, անդին ակն է:

ԱՆԱՆԻ, առանում է հապանին և դէն չգում:

Թող տանեն իրանց համար պահեն, ինձ հարկաւոր չէ:

ՍԱԼՈՄԵ

Վ՛ու քուանամ նես... (Մադանին վերաբենելով) Էտ ինչ արարմունք է... Էրէսդ պարզ կենալ, լաւ իս զիդացի մօր պատիւը:

ԱՆԱՆԻ

Ես քեզ չեմ անպատկում:

ՍԱԼՈՄԵ

Անպատուիլն էլ վուրը կուլէր, ձեռնէս առար ու դիլիս խփեցիր:

ԱՆԱՆԻ

Ներիր ինձ, մալր իմ, ճշմարխտ որ ես ինձ մոռացայ:

ՍԱԼՈՄԵ, Նադաւմ է աջ իռշմբ բաղէտլուտի վրայ:

Չէ էլ ամանչում. էն հանգի տանեմէն ուզում ինքիզ ու գուն էլ նաղ իս անում:

ԱՆԱՆԻ

Ում տանից էլ կ'ուզէ լինի. ես նրա ընկերը չեմ:

ՍԱԼՈՄԵ

Քու արփուը, էնէնց ննզիր իք մէկամէկունը գուն-

ցոր լինձուրը կէս անխա. զրաւատ մէկմէկու վրայ ձեւած իք՝ դուն չէհել, նա չէհել. դուն սիրուն, նա սիրուն. դուն խնձօք, նա հարուստ. էստու վրայ էլ լաւ ննզրութին կուլի:

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, մալր, եթէ սպանես էլ չեմ կարող... Ես նրան չեմ կարող ուզել, չեմ ուզում... ոչ ոքի չեմ ուզում...

ՍԱԼՈՄԵ, Վերէնալով:

Բաս մնա վուր տանը քայլխս... Գիժը նես իմ վուր ծանզը ու բարակ հիդդ մատահաթ իմ անում... Ճնորհակալ էլ չիս վուր քիզ բան իմ հարցնում... Գիտէս վուր նշներու էիր քու հօրը բերին մէրաշ զլիսխ կանգնեցրին ու ասին թէ՝ այ քու մարթը:

ԱՆԱՆԻ, յակ իռշմբ իռնգնուծ:

Ի՞նչ անեմ, եղել է ժամանակ, որ որդուն տանում էին վոզոց և այնպէս ծախում, ինչպէս ալոր մէկ ոչխար ծախեն:

ՍԱԼՈՄԵ, Խաբէնալով, Քաշցրուեալը:

Բաս էտ է քու խոնարութինը, Անանի:

ԱՆԱՆԻ

Կարծում եմ որ մինչեւ ալսօր քեզ միշտ խոնարհ եմ եղել, մալր իմ, բայց ինչ որ ինձանից չէ կախուած՝ չեմ կարող կատարել:

Աչուրը որբառ է:

ՍԱԼՈՄԵ

Ինդուր վուր դուն մենակ քու զլիսի համա իս վիքը անում: Արտիդ հիդ ննզիր իս ու էլ խիլքիզ չիս հարցնում: Գիզ համա էլ վունց մէր կալ, վունց

Հեր, վունց քուրու վունց քվիստիք մարթու տալու.
խօ տեսնում իս ինչ ժողովնակէ Եկի... Աստուձ քիզ
համա բաց արաւ Ես բախտը վուր մուքի ուզում ին
քիզ. իր օդարմութինը զիփ խօ մէ օջախի չի տալ...
ին էլ շատ է, ինչ քիզ համա է, տալի Աստուձ...
Էաօր է թէ էքոց քվիստիքի քի պէս մարթու տա-
լու կու զառնան, ինչով ինք մարթու տալի, քիզ
իմ հարցնում... Լաւ զիդենաս վուր քու հերը վուն-
չիչ չունէ. ամսէ ամխո տօնլուզը վիր է կալնում ու
վայ նաշարի, վունցոր ըլում է, ապրում ինք. Էկող
ամսուանն էլ էս զիսէն ինք ուտում... Իս տուն ու-
տիզը կարքած ու սարքած վուր տեսնում իս, աշխրքի
համա ինք սարքի. էս անց էլ վունչիչ չկայ...
Վիրչի թիքէն վրէն ինք բանեցրի: Ի՞նչի համա, չէ
վուր է քու ագրգացնելու... Հիմի վիքը արա, հերդ
օրն օրուան վրայ ծիրանում է, Աստուձ մի արասցէ,
զուլուզիմէն մէ բաշ գուս արին. (Անտնին Առշէնահրէ
ծածկում է աշխելը և լոյ է շինում:) առուտուր չի զի-
դի, վուր զնայ նուր մէկանց վուզ աշխատէ, ինչով
պիտի ապրինք, ինչով, քիզ իմ հարցնում. Զուրն
էկիլ է ու տարիլ է միզ էնչախը... Աբա, Անանի
ջան, էստունք էլ վիքը արա է, մենակ սրտի հիդ
դնալը վունց կուլի. ամա Ստեփան Գանէլիչը վուր
կայ, յաւիտենական զամին է տալի միզ Աստուձ...
Դուն հէնց զիդիս Միխէլին քիմէն պակաս իմ ու-
զում նես, քիմէն պակաս իմ հաւնում. ամա ինչ
անմիմ, առանց իր հօրը, նա էլ մէ քու հօր նման
մարթ զուս զու քալ... Էնդադա նա ինչ կանալ աշ-
խատի ու ճարի, վուր համ քիզ պահէ, համ միզ, ու

նրա հերը խօմ աշքարա զիդիմ, քու արխին էլ իմ
ասում, քու մէկէներունն էլ, վուր բաց աչկով իր
Միխէլին չի ժողնի վուր քիզ ուզէ. էրէգ առու-
տեան, խօ ասի էլ, իր բերնով ասաւ՝ վուզ ու բա-
ժինք չունիք, կ'ուէ... (Անտնին նեշուլիւն է արտայաց-
առանք:) Գատուր խօսկիր է, զանա, վուրթի. ամա էս
անզմով իմացալ նյ... Վունց է, վուրթի, մարթու
ճակտին զրած է վուր զիփ իր սրտի ուզածը չի կա-
նայ կատարի... Կունց վուր չըլի, խօմ ամէն մարթ-
թաքաւուր կուլի աշխրքումն ու ամէն կնիկ թա-
քաւուրի կնիկ... Խիլքումդ նստում է, զանա... Հէ-
քաւուրի է, վուրթի, աչկիրդ մի խարար անի:

ԱՆԱՆԻ

Ան, Աստուած, մւր էիր մարդուն սիրտ տալի:
Նորում է իր սուրբաշտն պէշը:
ՍԱԼՈՄԵ

Սիրտը տուլի է, վուրթի, ամա խիլքն էլ հիդն է
տուի, վուր սրտին կառափարիս... Փիքը արա, վուր-
թի, վիքը. դուն ինքդ կու իմանաս, վուր ծուռը
թիմ իսում քի մօդ... (Սօռ է գնում գրէում և համ-
բուրում:) Գէնացվակէ, Անանի ջան, լաւ վիքը արա...
Վիզիմ վուր խօնար իս, զիդիմ վուր զլուսդ չիս
խնակի միզ համա, վուր ասիմ ջուրը ննիլ, ջուրը
կու ննդնիս. ամա զոռ չիմ ուզում բանեցնի... Ես
ուզում իմ էնդադա վիքը անիս, վուր քու խիլքն
ասէ քիզ՝ «Հա»...

Դուքս է գնում չոխ բանից:

ՏԵՍԻԼ Դ

ԱՆԱՆԻ, ՀԵՆԱԿ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՌԱՄԱՆՈՒՅԻՆ ՅԵՊՐԱՅ ՎԵՐՔԵԽԱՌԵԼ

Այս, Աստուած, ինչի ծանօթացրիր ինձ Միքայէլի
հետ... Ի՞նչ անեմ այժմ, ո՞ր ջուրն ընկնեմ ես...
Միթէ խեղճի համար բախտաւորութիւն չկայ այս
աշխարհում, միթէ ամէն բան առեւտրի վրայ է հիմ-
նուած, միթէ էլ սուրբ ոչինչ չէ մնում մեզ... (Կորճ
շառութիւն:) Ի՞նչ անեմ այժմ, Աստուած իմ, ինչ անեմ...
Միթէ պէտք է ծախեմ ինձ ծնողաց համար...
Օ՛հ, թէ թանկ զնոտէ վատրփում ծնողաց ինտամքը...
Ինչ որ ուղիշների մէջ ծաղրել եմ, այժմ ինձ է
հանդիպում—հարստութեանը պէտք է զոհեմ ինձ...
(Դաստիք ծէծաղքը) Դրակց զար ու փարչալով փայլեմ,
խոկ սրտիցս արիւն կաթի... Աշխարհը պէտք է ինձ
երանի տայ, բայց եօ՛ այն ոսկու և արծաթի մէջ՝
վերջին աղքատին... Ի՞նչպէս հաշտուեմ ես, ինչ-
պէս, ալսպիսի դրսութեան հետ... Ի՞նչպէս դառնամ
թեթեամիտ. Բրիլիանտովի կինը... Նրա հետ կառքի
մէջ նստած լինիմ ու Միքայէլը ինձ տեսնի. արդեօք
ինչ պէտք է կաղծէ նա իմ մասին, ում հետ կը հա-
ւասարէ նա ինձ... Զէ, չեմ կարող ես Միքայէլին
ուրանալ. առանց նրան աշխարհս սուտ է, առանց
նրան կեանք չկայ ինձ համար... (Ստորի՛ յաւսահափ) Այս,
Աստուած, ինչի ստեղծեցիր ինձ, ինչի տուիր
ինձ հոգի, որ շունչ եմ քաշում, ինչի տուիր ինձ
սիրտ, որ ալսքան սիրեմ Միքայէլին... (Ձեռու ու-
նեցու ճանապին:) Էլ չդիտեմ ինչ եմ ասում..., Դլուխս

ալրփում է, աչքերս մթնում է, առաստաղը զիսիս
պտոյտ է գալի:
Ընդհանում է իր ալբումի վրա և հետեւալի լոյն է
շնորհ երկար ժամանուի:

ՏԵՍԻԼ Ե

ԱՆԱՆԻ, ՄԻՔԱՅԻԼ

ՄԻՔԱՅԻԼ, Տպանում է Թղթ ու առաջ է գուշի, Ո ՇԱՐ-
ՔԱՆԻ շուստ նայում Անանուն և յեպրայ հօտենուցը
Անանի:

ԱՆԱՆԻ, ՎԵՐԱՄԵԼՅԱՆ ու զիսիս:
Այս, Միքայէլ, զու ես... (Աշերը ուրբում է և չեռու
թէնիք) Ողնիր ինձ, Միքայէլ, օգնիր... ինձպէս տա-
րաբախս աղջիկ չկայ...
ՄԻՔԱՅԻԼ,

Հանգստացիր, հօգիս, (Համբուրելով յետունը:) Հան-
գստացիր, նստիր գեռ այստեղ... (Նապեցնում է:) Ի՞նչի
ես այզպէս լաց լինում... (Նապեցնով կողքին:) Պատմիր,
ինչ է պատահել:

ԱՆԱՆԻ

Մեղ յաւիտեան բաժանում են, Միքայէլ...
ՄԻՔԱՅԻԼ,

Բաժանում... յաւիտեան բաժանում... Բայց եթէ
դու չես կամենալ, Անանի, ով կարող է մեզ բաժանել:

ԱՆԱՆԻ

Գնողներիս խեղճութիւնն ու հօրդ աղահութիւնը...

ՄԻՔԱՅԵԼ

Հօրս ագահութիւնը մեղ հետ դործ չունի, Անանի,
իսկ քո ծննդներին ինչ է հարկաւոր. հարստութիւն
չեմ կարող խոստանալ, ի հարկէ, բայց դու լաւ զի-
տես որ նրանց անկարիք ապկելու համար ոչինչ չեմ
խնայիլ...

ԱՆԱՆԻ

Ախ, Միքայէլ, դու զեռ բոլորը չգիտես... Պայրս
ստիպում է ինձ թեթևամիտ բրիլիանտովին ուզել...

ՄԻՔԱՅԵԼ

Դու էլ արտասանեցիր այդ անունը, դու էլ ասա-
ցիր այդ խօսքերը... Գիտեմ, զիտեմ, Անանի, բոլորը
զիտեմ, ես բոլորը լսել եմ... (Վերէնառշալ) Այս ինչ
դժոխային հնարք են դործ զրել... Հայրս և մայրդ
երդուել են մեզ քանրախտայնել. բայց, դու, դու,
Անանի, միթէ դու համաձայն ես, միթէ կարելի է
թուում քեզ այդ ամուսնութիւնը, միթէ հարստութեան
զօրութիւնը կարողացաւ և քո սիրտը յափշտակել...
(Անոնին վշտառուտ է:) Ձէ, չէ, (Նստելով էացին:) ներիր
ինձ, ես չեմ կամենում այդ բանին հաւատալ, դու չես
ուրանալ ինձ, դու չես կարող ուրանալ... (Զեռքերը
բռնեցալ) Այնպէս չէ, Անանի, դու ինձ չես ուրանալ...
Դու իմն ես, իմ նշանաձն ես, դու խոստացել ես
իմս լինելու, մայրդ ևս խոստացաւ, նա միայն մի
քանի օրակ յետաձգեց մեր ամուսնութիւնը, նա իրա-
ւանք չունի քեզ հետ այդպէս վարուելու... Դու մի
վախենար, ես եմ քո պաշտպանը, քո տէրը, քո ամու-
սինը, ոչ ոք չէ կարող իրել քեզ ինձանից, ոչ ոք,
քանի որ դու ինքդ չես կամենալ...

ԱՆԱՆԻ

Բայց, մայրս, մայրս, Միքայէլ... նա այժմ ոչինչ
չէ կամենում լսել...

ՄԻՔԱՅԵԼ, ՎԵՐԷՆԱՌԱՅՈՒՆ

Պայրդ, մայրդ... Երեխայ ես դու ինչ է... Ո՞վ
կարող է քո կամքի հակառակ պատկ գնել գլխիդ...
Ահա թէ քո չափաղանց խոնարհութիւնը որպիսի
ծալրահեղութեան է հասել, որ համարձակվում են
մինչև անգամ այդպիսի առաջարկութիւններ անել
քեզ... Օհ, Աստուած իմ, այս ինչ մարդիկ են,
այս ինչ հասարակութիւն է. պատիւ, սէր, զաւակ,
խղճմաւանք, բոլորը, բոլորը ունախ խօսքեր են այս-
տեղ. այս հասարակութեան երջանկութիւնը միմիայն
փողն է, և եթէ այդ փողը մարդու սրտի մէջ անգամ
վինի պահած, սիրտը կը ճղեն որ միջից հանեն...
(Լուսաւիւն:) Գնա, գնա ուրեմն դու էլ ծախիր քեզ
մօրդ կամքը կատարելու համար...

ԱՆԱՆԻ, ՏՈՓԵՆԱՌԱՅՈՒՆ

Մի ասիր, Միքայէլ, մի ասիր, մի արտասանիր
այդ դառը խօսքերը. թող ես չլսեմ քո բերանից
այդպիսի նախատինքներ, սիրտս առանց այն էլ
կտրատվում է...

ՄԻՔԱՅԵԼ,

Ներիր, լինդրեմ...

ԱՆԱՆԻ, ՉԱՐՈՒՆԿԵՍՅՈՒՆ

Ինձ ոյժ է հարկաւոր, Միքայէլ, և այն ոյժը ես
քեզանից եմ խնդրում, քեզանից Միքայէլ. դու ես
իմ բարի հրեշտակը, իմ եղբայրը, իմ հայրը... Ասա,
իմ բարի հրեշտակը, իմ եղբայրը, իմ հայրը...

ինչ անեմ, ինչպէս աղատուեմ ես այս լուսահատ դը-
րութիւնից...

ՄԻՔԱՅԵԼ

Յուսահատուելով ոչինչ չես կարող օգնել, իմ
քաղցր Անանի, ախտեղ հարկաւոր է միայն սառը
դատողութիւն և հաստատուն կամք...

ԱՆԱՆԻ

Դատողութիւնս էլ կարաւ, Միքայէլ, ու կամքս էլ.
Ես ինքս չեմ հասկանում թէ ինչ եմ անում կամ ինչ
եմ խօսում...

ԱՆՀՈՒՅՆ է բեմ աջ էրշէ:

ՄԻՔԱՅԵԼ

Հօրդ հետ խօսել ես, Անանի, նա ինչ է ասում.
միթէ այն բարի մարզն էլ այն աստիճան քարա-
ցաւ, որ քո արտասուքներն անդամ նբա սիրող չեն
շարժում...

ԱՆԱՆԻ

Հօրս դեռ չեմ տեսել, նա տանը չէ. բայց միթէ
նրան չես ճանաչում. նա միայն մէկ կամք ունի և
այն է՝ միմիայն մօրս կամքը. նա ինչ կարող է, կամ
ինչ օգնութիւն պէտք է սպասել նրանից:

ՄԻՔԱՅԵԼ, հարձ շառաւելուից յեղոյ:

Անանի, դու ինձ սիրում ես:

ԱՆԱՆԻ

Միթէ դու կասկածում ես, Միքայէլ:

ՄԻՔԱՅԵԼ

Ուրեմն խկուն վճռիլ՝ կամ ինձ հետ խեղճ սող-
րել մեր սեպհական աշխատանքով, կամ մօրդ խոր-
հրդով հարստանալ. երկուսից մէկը...

ԱՆԱՆԻ

Ախ, Միքայէլ, ինչ ես ասում, ինչ հարստութիւն
կարող է ինձ տալ այն երջանկութիւնը, որը ես կ'ու-
նենայի քեզ հետ ապրելով թէկուզ ամէնագառն աղ-
քատութեան մէջ... Ես պատրաստ եմ չարչարովիլ,
տանջուիլ, բոլոր նեղութիւններն ուրախութեամբ տա-
նել, միայն թէ քեզ հետ լինիմ:

ՄԻՔԱՅԵԼ

Ձեռքդ տուր, (Զեւսը բանելով) գնանք խկոյն պսա-
կունք... Արի, արի շուտով հեռանանք այստեղից:
ԱՆԱՆԻ, բայց լուսնելով չեւուս:

Ինչ ես ասում, Միքայէլ... Դածուկ, առանց ծնող-
ներիս գիտութեան, հեռանալ տանից, փախչիլ ու-
րեմն. անկարելի է, Միքայէլ, անկարէլի. մահն
աւելի լաւ է ինձ համար, քան թէ այդ բանը, էլ
աշխարհի երեսին չեմ կարող նայել ես...

ՄԻՔԱՅԵԼ

Սուտ էին բոլոր իմ լոյսերը. դու արդէն նուիրել
ես քո սիրտը Ստեփան Դանէլիչի որդուն:
ԱՆԱՆԻ

Խնայիր ինձ, Միքայէլ, խնայիր. եթէ սիրտս նրան
լինէի նուիրած, էլ այսքան արտասուք չէլ թափիլ...
Ես նրան այնքան եմ ցանկանում, որքան դժոխքի
կրակը...

ՄԻՔԱՅԵԼ, չեւուսը բանելով:

Գնանք ուրեմն, Անանի. ըսպէն թանկ է մեզ հա-
մար... (Մէ քանի առյօն պանելով) Ուրիշ փրկութիւն չկայ:
ԱՆԱՆԻ, առաջանելով:

Կաց, կաց, Միքայէլ... ամբողջ մարմնով դողում

եմ, ծնկներս ծալվում են... Փամանակ տուր ինձ
վերջին անգամ խօսեմ մօրս հետ՝ ոտքերը կ'ընկնեմ,
կ'աղաչեմ որ ինձ կենդան գերեզման չդնէ...

Բայուռում է աշ իրաշի բաղկանուի վրայ:

ՄԻՔԱՅԵԼ

Ի դուր կը լինի, Անանի, քո աղաչանքը, նա քեզ
խղճացողը չէ, նա չի կարող խղճալ, նրա սիրտը մօր
սիրտ չէ. այժմ ես նրան լաւ եմ ճանաչում... Նա իր
տեսակ է հասկանում բախտաւորութիւնը...

ԱՆԱՆԻ

Այս, խելքս խառնվում է...

ՄԻՔԱՅԵԼ

Գնանք ասում եմ, գնանք իսկոյն. և եթէ կամե-
նում ես վաղը բոլորովին կորչենք այստեղից, ուրիշ
քաղաք գնանք, հեռու, հեռու, ուր որ կամենաս,
ամէն տեղ մենք միասին երջանիկ կը լինինք...
Գնանք, սիրելիդ իմ, Անանի, միթէ ինձ չես հաւա-
տում, միթէ իմ սէրը հաստատ յախտի չէ քեզ...
Վեր կաց, ինչի ես կաշկանդուել, վեր կաց, իմ սի-
րուն Անանի, իմ քաղցր Անանի. ոչինչ չեմ խնայիլ
քեզ համար՝ հանգստութիւնս, կեանքս, բոլորը, բո-
լորը քեզ եմ նուիրել, քո բոլոր կամքը, քո ամենա-
փոքր պահանջն անգամ սրբութեամբ կը կատարեմ...
Վեր կաց, մի լաց լինիր, այլւս ժամանակ մի կոր-
ցնիր, շտապիր... (Վեր է իսյուռուն:) Գնանք...

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, Միքայէլ, իսկոյն վայր կ'ընկնեմ...
(Իսյուռուն է:) Խղճա ինձ, Միքայէլ, աղաչում եմ, խղճա...
Բայուռում է նոյն բաղկանուի վրայ:

ՄԻՔԱՅԵԼ

Սակայն ես քեզ այլպէս թողնելու չեմ, ես իսկոյն
կ'երթամ հօրդ կը գտնեմ, ամենայն միջոց գործ կը
դնեմ, որ գոնէ նա զթալ... Վերջապէս նա մարդ է,
մօրդ պէս քարասիրու չէ, թող գայ տեսնի քո ար-
տասուքները, նա անզատառ կը խղճալ քեզ... Մի
վախենար, հօդիս, (Համբաւելով յէտուլ:) ես իսկոյն կը
վերադառնամ... (Գնանքը) իսկոյն կը բերեմ հօրդ...
Դուրս է գնուռ մջե բանից:

ՏԵՍԻԼ Զ

ԱՆԱՆԻ, Ընտառ. Երկար շառաւելենից յետոյ վեր է հենուն:

Գնանց... ինչ անեմ, Աստուած իմ, ինչ անեմ
այժմ... Ո՞րի հետ կարող եմ փոխել Միքայէլին. ո՞վ
կայ նրա նման... Անքան սիրել, որքան նա է ինձ
սիրում, ո՞վ կարող է...

ՏԵՍԻԼ Է

ԱՆԱՆԻ, ՍԱԼՈՄԻ, ո՞վ հոնում է յուն բանից:

ԱՆԱՆԻ, Ընդհելով հօր ոտքէրը և փալավելով ծննդելին:
Մի տարաբախտացնիր ինձ, մայր իմ. առանց Մի-
քայէլին ես չեմ կարող ասլիրել... Միթէ Ստեփան
Պանէլիչի հարստութիւնը ինձանից աւելի թանկ է
քեզ համար. եթէ ես չեմ լինի, ինչ հարկաւոր է
քեզ այն հարստութիւնը:

ՍԱԼՈՄԵ

Վիլաց, ինչ իս անում. էտ էր փիքը անում ինչ-ըու հիմի, էտենց չուստ քամու տուիր իմ խրատ-նիրը:

ԱՆԱՆԻ, ՔԵՐԵԿԱՌՈՒՑ:

Ի՞նչ անեմ որ սիրու Միքայէլին է քաշում...

ՍԱԼՈՄԵ

Էլի Միկունիլ, էտ խօմ էլախտ ասինք էլ ու լսեցինք էլ. խիլքումդ չնստեցաւ վուր անկարելի բան է:

ԱՆԱՆԻ

Ի՞նչ ես կամենում, գու մայր իմ, ի՞նչ. Բրիլիանտօվի հարստութիւնը չէ կարող տալ քեզ այն՝ ինչ որ Միքայէլը չի խնայիլ քեզ. նա իր աշխատանքով, ես իմ մատի պտղունցով զիշերը ցերեկ կը շինենք ու քո սրտի բոլոր ուզածը կը կատարենք:

ՍԱԼՈՄԵ, ԳԵԳԱՅԻՆ:

Բաս ի՞նչ իք արի:

ԱՆԱՆԻ

Հաւատա, մայր իմ, որ մենք մեր սեպհական աշ-խատանքով աւելի կարող ենք օդնել քեզ քան թէ խատանքով իր ամրող հարստութիւնով... Ամէն Բրիլիանտօվը իր ամրող հարստութիւնով... Ամէն հարուստ իր համար է հարուստ և ոչ մէկ հարուստ իր ունեցածը խեղճերին չէ բաժանել. մի յուսար թէ նրանք քեզ հազարներով փող կը տան...

ՍԱԼՈՄԵ

Կոս նրանց հազարնիրը չիմ ուզում. Կոս քու լա-ւութիւնն իմ ուզում:

ԱՆԱՆԻ

Եթէ իմ լաւութիւնն ես ուզում, մայր իմ, թող ես Միքայէլին ուզեմ:

ՍԱԼՈՄԵ

Գուն «Հա ու չէ» չիս իմաննամ, թէ գժուիլ իս ու տուտուցացիլ իս, չիմ զիզի. չիմացար վուր նրա հէրը չէ ուզում, խուլ խօմ չիս:

ԱՆԱՆԻ

Ի՞նչ անեմ թէ հայրը չէ ուզում. այդ չէ արդե-լում Միքայէլին ինձ ուզել. նա այս բոպէիս ակա-տեղ էր...

ՍԱԼՈՄԵ, ՇՆԴՑԵՂՅԵ

Ով էր էստի. Միկունիլը... ին վունց էկաւ ու գնաց չամանակ էկաւ, Աստուծ վուր չամանակ... ին ինչ ժամանակ էկաւ, էկաւ, Աստուծ վուր չամանակ... ով էր իմացի էստնց տղայ ու ախչկալ զիզենայ. ով էր իմացի էստնց տղայ ու ախչկալ զիզենայ... Պիփի իմ միղն է վուր մօդնի ժաժ էկայ, խօսիլը... Պիփի իմ միղն է վուր մօդնի ժաժ էկայ, պիկալնիս ու քարդուրձ անլու ինձ... Իժում ինչ էր պատում էն բէ հայէն:

ԱՆԱՆԻ, ԴԱԿԱՆԱԿՅԱԺ:

ԲԷՀԱԵՎ...

ՍԱԼՈՄԵ

Բաս ի՞նչ է վուր բէհայիս չէ. Կոս իր բերնով ապսպեցի վուր քիզ նշնում իմ, ուրիշին իմ տալի, էլ ուր էր գալի, ի՞նչ քաղաքավարութիւն է. ի՞նչ է էլ ուր էր գալի, ի՞նչ քաղաքավարութիւն է. ի՞նչ է ուզում միղմէն, նշնած խօմ չիմ թողնուլ տալի քիզ...

ԱՆԱՆԻ

Կաստատ նշան չէ:

ԱՅԼՈՄԵ

Էտէնց իս կարծում, մէրը քոռացրիլ է քու աչկիրն էլ, նրանն էլ ու էլ սխ ու սիպտակ չվք տեսնում վունց մէկդ... (Հանձնու գրողանից հայուննեն:) Ես քիզ ասում իմ առ էս մատնիքն ու ձեռիս պաշ արա:

ԱՆԱՆԻ

Չեմ կարող, մայր, չեմ կարող, մորթես էլ չեմ կարող...

ԱՅԼՈՄԵ

Վունց թէ չիս կանակ. բաս ՚ես էլ մէր չիմ քունը... Զուր էլիր կտրախ ու քիզ չէի բերի... Իս է իմ ամազը, էտէնց իս վջարում... Ի՞նչի քիզ ուրիշներու պէս կօպտի ու կրխած չմինձացրի, էնչախը կու իմանէիր իմ զինը... Ես իմացիլ իմ փար ուսումն աւելի պիտի սորվեցնի հօրն ու մօր պատիւր, չէ թէ էտէնց հակառակ խօսիլը... (Սահանին լուշինուից ոչչեցէն:) Բունէ, ասում իմ, բունէ էս մատնիքն ու մի անիծիլ տա ինձ քու ծնելու ու իմ ծրնելու սահաթը. հանէ Վիխէլիլ մտկեմէդ:

ԱՆԱՆԻ

Ախ, Աստուած, որ ոչ մտքիցս է հեռանում, ոչ սրտիցս, մայր իմ, ինչ անեմ...

ԱՅԼՈՄԵ, հետպահետ պահանարը

Վտկեմէտ չէ հիւանում ու սրտեմէտ... Թէ՛, զնա, դուռը բաց է... զնա ձեռը բանէ ու էս սահաթիս հիդը փսակուի... զնա աշխրքի ղէնո դառի. զնա հիդը փսակուի... զնա աշխրքի ղէնո դառի. զնա թիւն արա, ուրիշ էլ ինչ է մնում... Ա! գեղինը պատռուի ու քիզ դէվէր տանէ, հըա...

ԱՆԱՆԻ

Բաւական է, մայր, էլ ես ոչ ոքի չեմ կամենում, ոչ Վիքայէլին և ոչ էլ մի ուրիշին:

ԱՅԼՈՄԵ, շարունակելով:

Բէհայիա, կապ կտրած, չէ էլ ամանչում... Ես մէր ըլիմ, քիզ բան ասիմ ու իմ խօսկը չկատարիս... էլ ի՞նչ մէր, ի՞նչ կօնկա զուն մէր... քու մէրը չար սատանէն է, վոր մտիլ է ջանդ ու էլ փունչիչ չիս իմանում:

ԱՆԱՆԻ

Խղճա ինձ, մայր իմ, աղաչում եմ քեզ, խղճա ինձ. թող աշխարհից հրաժարուիմ, թող կուսանոց մտնեմ զիշեր ցերեկ աղօթք կանեմ քեզ համար, իմ քոլերի համար, բայց բրիլիանտովի հարստութեան կերակուր մի շինիր ինձ, մայր:

ԱՅԼՈՄԵ

Այ, փչանաս, փչուխ, վիրջնչուի քու անումը, նաշումը էլ թաղիմ, քու քվիրտերանցն էլ, ՚երկիդ մէնաշումը տեսնիմ...

ԱՆԱՆԻ, աշենքը:

Օ՛, մայր իմ, մայր իմ...

ԱՅԼՈՄԵ

Վայր Աստուձը խոռվ կենայ քիզ, վուր էլ ՚ես քու մէրը չիմ. իմ մօր մէչկը չորցիլ էր, վուր ինձ չէր բերի ու քիզ չէի ունեցի...

ԱՆԱՆԻ, բեդ չոխ հուշը հոնգուծ:

Ախ, Աստուած, ինչի հէնց ար բոպէխ հողիս չես առնում:

ԱԱԼՈՄԷ, Հանգնած բեմի աջ հողմը:

Ազանցաք արա Աստծուն, աղանցաք, վուր մէքաշ
մեռնիմ ՚ես, թաղիս ինձ, մաղիրդ զջլունի լաց ըլիս
ինձ վրայ, ուստա սիսիր հաքնիս, մէ էրկու ամսուան
վրայ մարսիս իմ մահը ու իժում դնաս քու որսի
ուղածն անխօ քու Միխէլին ուղիս. տեսնիմ թէ
վունց է խերում քիզ Աստուձ...

ԱՆԱՆԻ, սաստիկ յուղուած՝ արագ հօդնալով հօրը:

Դուք իմ մահն էք ուղում, մայր, (Խշւով հապանին) շուտով կը տեսնէք...

Մի քանի ժայլ շատողով գործ է ունի յան:

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՄԻՔԱՅԵԼ, ԵԱԴՈՐ ՄԻՄՕՆԻ2

ԱՆԱՆԻ, պեսէլով Միքայէլին, մանէլիս մէջ է դանից:

Աի...

Շիռլուսէլով՝ բանում է յան հողմի ալուս:
ՄԻՔԱՅԵԼ, սասարկեն ողջունէլով Սովոմէկին՝ շատողով հօդնում
է Անտոն, մինչու Սագօր Սիմօնիչը նոր է մանում
նոյն դանից:

Ահա և հայրդ, Անանի. նա մեզ հաստ համաձայն
է, նա քո երջանկութիւնն է ցանկանաւմ...

ԱԱԼՈՄԷ, Եագօր Սիմօնիչն, բարիոյած:

Թէ մէ իսօնկ ասիլ իս, դլուխս էստի էւկո կու
սպանիմ, զիգէ Արարիչը... (Անոնուն աջ յետով յան
դուռը յոյց ուղղվէ) Հիուացի էսղանց:

Զետէր թէնած հուսմ է անշարժ:

ԱՆԱՆԻ, Միքայէլին:


Ներիր ինձ, Միքայէլ, ներիր... ես վճռեցի զոհել
ինձ ծնողիս կամքին... Մնաս բարեաւ յալիտեան...
Գոյում է. յախ որպան հօթ իսկնդ առնելով նա-
յում է Միքայէլին և յանհարծ ուռու ընդ-
նում:

ՄԻՔԱՅԵԼ, շնորհուած, ինիւմ է ճակատին:

Օ՛, թշուառս...

Մոնում է անշարժ: Եագօր Սիմօնիչը՝ հանգնած
Միքայէլին յախ հողմ՝ նոյում է նրան, ու-
սերը բարյացնում և լեռերը բանալով ար-
դայայառում, լեռ բոլը մերջայաւ. նոյնուն
հուսմ է անշարժ: ՊԱՏԿԵՐԻ: Վարդագոյնը իս-
լայ իսմայ իջնում է:

Վ Ե Ր Զ




ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Թ.Ա.ՏՐՈՒՅԿԱՆ Ա.ՅԼ.ԳՐՈՒՌԾՆԵՐ

ԳԻՇԻՐՎԱՆ	ՍԱ.ԲԻՐ	ԽԵՐ է,	ԺՈՂՋՄԱՆ ՅԵԼ արա-
ըուածով	.	.	20 կ.
ԽԱ.ԹԱ.ԲԱԼԱ	Կօմեղիս	չորս արարուածով	50 կ.
ՊԵՊՈ	Կօմեղիս	երեք արարուածով	30 կ.
ՔԱ.ՆԴԱԾ	ՕԶԱԽ	Կօմեղիս երեք արարուածով	50 կ.

Վահան վաւում էն թիվլեզում կենդրուննեն և կովկասնեն
գրավահան անոցներու մէ



ՀՀ Ազգային գրադարան



NL0342525

